№ 5 (171) XVI ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

„ՅԱՐՄԱՐ ԲՈՊԷՆ"

Ուրախ արտաքին բարդութիւններից, որոնք քաղաքական ուշադրութեան կենտրոնատեղին փոխել են այլ վայրեր և այլ երկիրներ, Մեծ-Ոճրագործը լռելեայն շարունակում է իր աւերիչ, իր մարդաջինջ քաղաքականութիւնը, թագնուած այն վարագոյրի յետևը, որ կոչւում է սուլթանական գաղտնապահութիւն...

Եւ իրօք՝ „բոպէն" նպաստաւոր է։ Ընդուր աղէտներ Հարևան բռնապետութեան մէջ, ուր սկիզբն է առնում մի հսկայական մենամարտ ժողովրդապետութեան և միապետութեան—դուժայի և ցարի մէջ. սըրտայոյզ արհաւիրքներ Իտալիայում և Ամերիկայում, ուր բնութիւնը՝ մի տեղ հրաբուղխով և միւս տեղ երկրաշարժով՝ նոր „կաթիլներ" աւելացրեց սոցիալիական դառնութեան վաղուց լքցած բաժակին. բանուորական եղակի աղէտ Կուրրիերի մէջ, որ տակն ու վրայ արեց ոչ միայն Ֆրանսիան, այլ և ամբողջ մարդկութիւնը. մայիսի մէկը՝ իր ահաւոր և ռազմական գրոհով, որ ինչպէս մրրիկ ցնցեց ամբողջ արևմուտքը. վերջապէս՝ Ալժեզիրաս և Թարա—այդ բոլորը ի մի գումարած և միմեանց յաջորդելով, մեծ անուշադրութեան և նոյնիսկ մոռացութեան մատնեցին Արեան Երկիրը, որ վաղուց, անհամբեր և կսկծանքով սպասում է իր հերթին՝ մի տոկունութեամբ, որ դասական է, և մի մարտիրոսագրութեամբ, որ նմանը չունի դարերի թշուառութեան էջերում։

Ու „բոպէի յարմարութիւնը" Դրան կրկնակի սիրտ տուեց շարունակելու իր անաղմուկ ոճիրները,—Թալան և աւերմունք Մուշի շրջանում, ուր Խ է յ պ ե ա ն և Խ ա ս գիւղերը ոտի տակ են տրուած. հարուածներ ամբողջ Վասպուրականին, ուր քիւրդ պ ա շ տ օ ն ա կ ա ն խմբերի ապաստակութիւնները՝ միացած հարկային անպատմելի ճնշումների հետ՝ սպառնում են նոր գաղթ և նոր աղէտներ. մահմեդական նոր գաղութների հաստատումն Սեբաստիայի շրջանում. եկեղեցական կալուածքների՝ ինչպէս Թ լ ա ն ի գրաւումն Կիլիկիայի մէջ, իբրև մի նոր աքացի թիւրքահայ Սահմանադրութեան աննախանձ մնացորդներին. ձերբակալութիւններ և աքսոր Զէյթունի մէջ. բանտարկութիւններ և տանջանք Արևելեան նահանգներում. սպանութիւններ և թալան Էրզրումի վիլայէթում. զօրանոցների ուժեղացում արիւնաքամ Սասունի կողմերը—ահա այն „վարագուրած" ոճիրները, որոնք սուլթանական ծրագրով տարածուեցին հայկական նահանգների վրայ և որոնց խլացրած արձագանքները անզօր եղան թընդիւն հանելու արտասահմանում, նոյնիսկ սահմանի այն կողմը, ուր շատ են թանձր քաղաքական ամպերը և շատ ուժգին՝ տեղական աղէտների պատճառած մորմոքը. . .

Սակայն այդ բազմագլխեան ոճիրը, կատարուած մթութեան մէջ, սուլթանական ծանօթ զգուշութեամբ, մարտական տարրի վհատութեան նշանը չէ, այլ ապացոյց այն մեծ երկիւղի, որ թեւատարած բարձրանում է Եղբզի Մենակեացի վրայ, որին ուրիշ ելք չէ մնում, բայց եթէ որոնել „յարմար բոպէներ" և „խառնակ վիճակ" իր ծրագիրները իրագործելու համար։ Ունա՞յն ծրագիրներ։ Ոչ քաղաքական բարդութիւնները, այնքա՞ն հաճելի սուլթան Համիդի կառավարութեան, և ոչ էլ դիւանագիտութեան „դեռ համբերեցէք"-ը, յաճախ կրկնուած հայկական դատի պաշտպաններին—չէն փրկի խելակորոյս ոճրագործին, որ գնում է դէպի մահ, և ոչ էլ նրա դանդրեանաւոր բեժիմը, որ վաղուց թեքուած է դէպի խաւարումն . . .

Ցարիզմի կործանումից յետոյ՝ հերթը սուլթանականութեան կը հասնի։ Հաւանօրէն՝ ինքը սուլթան Համիդ, միապետութեան այդ հրէշ—վիժմունքը, ոճրագործ և ախտածին, արդէն գերեզմանին մօտեցած կամ գուցէ վրիժառու ա ջ ո ղ ռուսին զոհ, սեփական աչքերով չի տեսնի մեծագոյն „աղէտը"—ազատութեան թագաւորումը Եղբզի վրայ. սակայն նրա յաջորդը, ով և լինի, կ'արժանանայ այդ բ ա խ տ ի ն և պ ա տ ւ ի ն..

Յեղափոխութեան համար էլ կը գայ „յարմար բոպէն"—երբ բոլորն ու ռուսը, հայդուկն ու ապստամբութիւնը՝ բ լ օ կ կազմած՝ կը փշրեն Եղբզի դռները, Պոլսի մէջ էլ կը ստեղծեն մի հոկտեմբերի 17, ապա մի նոր 89 և կ'առաջնորդեն յաղթական ժողովրդապետութիւնը դէպի վերջին գործողութիւնը, դէպի Օսմանեան պետութեան „93"-ը—արդարութեան և հատուցման այդ խրատական ու մեծ օրը...

—

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

—

Մեր դատի քաջարի պաշտպան եւ „Պրօ Արմենիայի“ հեղինակաւոր խմբագրապետ Պիեր Քիյարի ներկայ յօդուածը, գրուած յատկապէս „Դրօշակի“ համար, սիրով յանձնարարում ենք Ռուսաստանի յեղափոխական մարմինների ուշադրութեան:

Այն պահուն, երբ հոկտեմբերի ընդհանուր գործադուլը պիտի ստիպէր ցարիզմը առաջին անձնատուութեան, միջազգային ֆինանսիստները Պետերսբուրգի մէջ պայման կնքելու վրայ էին. բայց կռահելով որ իրենց փողին ոեւէ վտանգ կսպառնար, ճամբայ ելան և վերադարձան՝ որը Գերմանիա որը Ֆրանսա:

Յետոյ ռուսական գործերը խաղաղեցան: Մոսկվայի մէջ Յեղափոխութեան ջախջախումը թոյլ տուաւ անոնց՝ որոնք շահ ունէին խաբուելու և ուրիշները խաբելու, յայտարարել՝ որ իսկապէս ինքնակալութիւնը յաղթանակեց և բիւրոկրատները կացութեան տէրը մնացին: Ֆինանսիստները ձեռք առին նորէն բանակցութիւնը, ընդհատուած ողբերգական ճգնաժամով, որը կը հաւատային կամ կը ձեւացնէին թէ վերջացած է: Բայց այս անգամ, հրամանով թէ խոհեմութեամբ, գերման սեղանաւորները, իբրև աւելի տեղեակ գործին, յետ քաշուեցան և ապրիլի վերջը փոխ տրուած 2 միլեարդ 250 միլիոն ֆրանքին մեծ մասը ստորագրեցին ֆրանսական պանքաները: Մինիստրութիւնը, որուն կը նախագահէր Րուվիէ, երևելի գործարարը, պարզապէս ուժ տուաւ փոխառութեան: Սարիէնի մինիստրութիւնը իր մէջ ունի հեռատես հակառակորդներ — ինչպէս Կլէմանսօ և Գաստօն Դումէրգ — այն ստրուկ քաղաքականութեան, որուն հետևեցան յաջորդաբար Հանոտօ, Դէլկասէ և Րուվիէ կառավարական Ռուսաստանի նկատմամբ, իսկ ֆինանսների մինիստր Պուանկարէ, ջերմ հիացող մը չէր ծայրայեղօրէն վտանգաւոր ֆինանսական քաղաքականութեան մը: Բայց և այնպէս ֆրանսական կառավարութիւնը թոյլատրեց նոր փոխառութիւնը՝ Պարիզի սակարանին գնով:

Ֆրանսական կարևոր օրաթերթ մը, „Humanité“ սոցիալիստական թերթը միայն, մատնանիշ ըրաւ ոճիրը և սխալը որ միասին կը գործէին մեր մինիստրները և մանաւանդ մեծ սեղանաւորները՝ որ բոլոր կառավարութիւններուն կ'իշխեն: „Revue“ հանդէսը նմանապէս գեղեցիկ պայքար մը մղեց, որ անօգուտ անցաւ՝ ամբողջ մամուլի լռութեան, կամ աւելի ճիշտը՝ այն լիրբ յօդուածներուն պատճառով, որոնք կը գովաբանէին ֆրանսական խնայողութիւնը ռուսական արժէթղթերու վրայ շահեցնելը, իբր շահաբեր և հայրենասիրական գործ:

Սակայն լաւատեղեակ և կորիճ փոքրիկ խումբ մը, միևնոյն յամառութեամբ, ինչպէս ուրիշ պայքարներու մէջ, չը խնայեց իր ազդարարութիւնները ոչ ֆրանսական ժողովրդին, ոչ ալ անոնց որոնք անոր շահերը կառավարելու ժամանակաւոր պաշտօնը ստանձնած են: Անատօլ Ֆրանս քանիցս ձայն բարձրացուց՝ նշաւակելով զանոնք, որոնք մեղսակից կը հանդիսանային գարշելի կառավարութեան մը. և նորերս Մաքսիմ Գորկիի ուղղած մէկ նամակին մէջ ցաւագին զայրոյթը կը յայտնէր, երբ կը լսէր թէ՝ Ֆրանսացի ֆինանսիստները դրամ կը հայթայթեն դահիճներու կառավարութեան, որ կը մարտիրոսացնէ մեծահոգի ժողովուրդ մը:

Կարճատես և անխիղճ փոխատուները մէկ բան միայն աչքի առջև ունէին — այն՝ որ իրենց դրամները անսպասելի և վաշխառուական 6 տոկոսով շահու տան: Խորը մտածելու անկարող, անոնք չէին իսկ մտածեր թէ արդեօք իրենց պարտապանը, այդքան խոստանալով մըտադիր չէ՞ սնել և առաջին առիթով սնանկ հռչակուիլ:

Ռուս կառավարութեան ծրագիրը սակայն շատ յըստակ էր: Պր. Վիտտէ ինքը իսկ, փոխառութիւնը յաջողցնելով, պալատական դաւախումբին ծառայելէ յետոյ, պէտք է հեռացուէր. և արդէն հոկտեմբեր 30 ի Յայտարարութեան խոստումները քիչ քիչ սահմանափակուեցան և ջնջուեցան. մինչդեռ Պետական Խորհրդի վերակազմութիւնը, Բարձրագոյն Խորհրդարանի մը ձև առած և կէսաւ կէս պաշտօնեաներէ բաղկացած, նախօրօք չէր ընդունէր Դումային արդէն տեսականապէս խեղճուկրակ հեղինակութիւնը:

Կարելի էր նախատեսել, որ, ճակատագրօրէն, այս ժողովին և բացարձակապետութեան միջև տագնապ մը պիտի ծագէր: Այդ ճգնաժամէն առաջ, կառավարութիւնը՝ առանց Դումայի կօնտրոլին դիմելու, կը ցանկար ձեռք բերել անհրաժեշտ նիւթական միջոցները՝ որպէս զի ուզածն ընէ և հէնց սկիզբէն մէջտեղէն վերցնէ ժողովրդական պատգամաւորութիւնը:

Այսպիսի կռուի մը անխուսափելի հետևանքը պիտի ըլլայ կամ յետադիմութիւն կամ յեղափոխութիւն: Յետադիմութիւն՝ այսինքն կառավարութեան արդի գործելակերպի շարունակութիւնը, — գանձին վատնումը, կոտորած ազատականներուն, մտաւորականներուն, օտար ցեղերուն և հրէաներուն. դըպրոցներուն և համալսարաններուն փակումը, երկրագործութեան աղէտալի կործանումը, աւելի ծանր փոխառութեան դիմելը և վերջնական սնանկութիւն:

Յեղափոխութիւնը՝ աւելի հաւանական է: Այսինքն՝ բուն յեղափոխականներէն դուրս, պարզ ազատական կուսակցութիւնները պիտի հրաժարէին օրինական միջոցներէ և աս պիտի ըլլայ անհրաժեշտ և արդար վերադարձ դէպի քաղաքական ընդհանուր գործադուլը, հողային շարժման պայթումը, անհատական և հաւաքական սպանութիւններու սանձարձակումը, համայն հասարակական, տնտեսական և արդիւնաբերական կեանքի կասումը, և ի վերջոյ՝ սնանկութիւն:

Ուստի, ոչ միայն մարդկային համերաշխութեան զգացումը հանդէպ ռուսական երիտասարդ ռամկապետութեան և հարստահարուած ժողովուրդներուն, պարտադիր կ'ընէր Ֆրանսացիները իրենց ոսկիներով չօգնել ցարի կառավարութեան, այլ նաև իրենց շահը կը պահանջէր որ հեռու մնային գործողութենէ մը՝ որ, հաւանականաբար, պատճառ պիտի ըլլայ Ռուսաստանի փոխ տուած նախորդ ինը միլեարդի կորուստին:

Ռուս յեղափոխականներուն, ազատականներուն և հարստահարուած այլացեղ ազգութիւններու ներկայացուցիչներուն զայրոյթը սաստկացաւ Ֆրանսացիներուն դէմ: Արդար է այդ զայրոյթը: Ֆրանսայէն ղրկուած փողերով է, որ ցարիզմը գերագոյն կռիւը պիտի շարունակէ ժողովուրդի դէմ...

Ինչպէս ռուսական, նոյնպէս ֆրանսական ժողովուրդը պէտք չէ շփոթել իր կառավարողներուն, ոչ ալ մեծ կամ պզտիկ դրամատէրերուն հետ: Թէ՛ մեր դիւանա-

գիտութիւնը՝ որ մեծ նշանակութիւն ընծայած կ'ըլլայ առաջ դիւանագիտութեան ծառայութեան, ամենաշահաւետ ծառայութիւնը՝ որ նա կը մատուցանէր Ալժէզիրասի մէջ. թէ՛ մարդկային ոչխարախումբը՝ որ իր դրամը լաւ շահեցնելու տեղ կը փնտռէր՝ հրապուրուած 6% տոկոսէն. թէ՛ մանաւանդ հրապարակին տիրող պանքաները,—բոլորն ալ պիտի կրեն պատիժը իրենց արարքներուն. փոխատուներու ոչխարախումբը իրենց անապահով դրամագլուխներու հաւանական կորուստով, և կառավարողներն ու սեղանաւորները այն միամիտներու բարկութենէն, որոնց խաբեցին կամ թոյլ տուին որ խաբուին։

Շատ ֆրանսացիներ վաղուց մերժած են ուրէք համերաշխութիւն իրենց ֆինանսիստներուն, կառավարողներուն և իրենց կոյր հայրենակիցներուն հետ, որոնք անտարբեր են Ռուսաստանի եղբայրներուն աղատամարտին և տառապանքներուն։ Ճիշտ է, անոնք դեռ բազմաթիւ չեն և իշխանութիւնը իրենց ձեռքը չէ։ Բայց որովհետև իրաւունքը իրենց կողմն է, անշուշտ պիտի գայ ժամանակ՝ երբ անոնք իբրև լաւ մարգարէներ պիտի ճանչցուին։ Ասոնք բնաւ չուզեցին դաշնակցութիւն կապել բռնապետութեան և ֆրանսական հանրապետութեան միջև, այլ ամենասերտ դաշնակցութիւնը կընքեցին ռուս ռամկապետութեան հետ։ Անոնց համոզումն է, որ ոչ մէկ տեղ Եւրոպայի մէջ, ոչ իսկ Ֆրանսայի մէջ, ճշմարիտ ազատ բէժիմ մը պիտի չը հաստատուի, որքան ատեն յետադիմական անսահման ուժը կայ ու կը մնայ։ Ցարիզմի կործանումը անհրաժեշտ կերևայ անոնց, և ատկէ քիչ յետոյ՝ պիտի դայ տապալումը Գերմանիոյ մէջ աւտտական բացարձակապետութեան և այն գազանային բռնակալութեան, որ սուլթանը ցարին եղբայրակից կը դարձնէ։

Այդպէս խորհողները ամեն ինչ ըսին ու ըրին կնքուած փոխառութեան դէմ։ Երբէք չը վհատեցան՝ որ մինչև հիմայ „անապատին մէջ կը քարոզէին"։ Քանի մը ամիսէն՝ նոր փոխառութիւններու հարկ պիտի ըլլայ, և անոնք կը յուսան հանրային կարծիքին և կառավարութեան վրայ աւելի զօրեղ ներգործութիւն ունենալ՝ այն չափով ինչ չափով որ դուման և յեղափոխական կուսակցութիւնները կամ բարենորոգիչները կը կարենան գործօն դեր կատարել։ Արդէն ֆրանսական միևնոյն ժամուլը, որ միշտ ցարիզմի և մեծ սեղանաւորութեան դատին ծառայած է, մտահոգ է ռուսական վարկի ապագայի և ամրութեան վերաբերմամբ։

„Temps" լրագրի ֆինանսական քրոնիկագիրը կը գանէ որ „մայիս 10-ը շատ պատշաճ անցած է և մեր հրապարակի վրայ, որ սերտ կապուած է մեր դաշնակցին արժէթուղթերուն, մեծ հանգստութիւն մը առաջ եկած է"։ Ան չի նշանակեր թէ մեր ֆինանսները շատ ապահով ըլլան։ Կը սխալին այդքան շուտ վստահելով...

Ռուս դիմադիր կուսակցութիւններուն կը պատկանի անոնց հակառակը ապացուցանել և անկարելի դարձնել ուրէք նոր փոխառութիւն։

ՊԻԵՐ ՔԻԱՐ

„ԴՐՕՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

ԹԻՖԼԻՍ, մայիս 10

Վարանդ ուղարկուած կառավարչական քննութիւնը արդիւնք չը տուեց։ Գեներալ Մալաման վերադարձաւ անօգուտ։ Կառավարութիւնը աշխատում է փաստերը թաւգցնել կամ մոռացնել տալ։ Բողոքողների դէմ ոստիկանութիւնը ատամներ է կրճտեցնում։ Եթէ ոճրագործները անպատիժ մնան՝ դա պիտի լինի անհերելի նախատինք արդարութեան և տանջուած ժողովրդի։

ԲԱԿՈՒ, մայիս 10

Քաղաքի տրամադրութիւնը հանգիստ չէ։ Դարձեալ նկատուում են անվստահութեան նշաններ դէպի իշխանութիւնը։ Հայրենասիրական-խուլիգանական շրջանները եռանդով պատրաստութիւններ են տեսնում, թէ՛ այստեղ և թէ Թիֆլիս։ Լուր եկաւ Թիֆլիսից, որ ոստիկանութիւնը և խուլիգանութիւնը ծրագիրներ ունին, ուղղած գլխաւորապէս Դաշնակցական մարմինների դէմ։ Խուզարկութիւնները շարունակւում են գաւառներում ևս։

ԹԻՖԼԻՍ, մայիս 14

«Ցառաջ» լրագիրը խափանուեց ժամանակաւոր կերպով։ Աղմինիստրացիայի խստութեան առաջին զոհը չէ այդ և ոչ էլ վերջինը երևի։ Անդադար նոր լրագիրներ են երևում, և դրա հետ միասին անդադար խափանումներ՝ եղածների։ Գրաքննութիւնը նորից գլուխ է բարձրացնում։ Մամուլը ենթարկուած է գեներալ-նահանգապետի կամայականութեան և ոստիկանական քմահաճոյքներին։ «Մամուլի ազատութիւնը»—հրապարակական սուտ է։ Նա գոյութիւն չունի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԼՈՒՐԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Պէյրութ, 19 | 2 մայիսի

Ինչ որ պիտի կատարուէր կատարուեցաւ։ Վերջին իրատէ մը յարքունիս կը գրաւէ Կիլիկիոյ Աթոռին պատկանող Թլանի ագարակը։

Ընդարձակ տարածութիւն ունեցող այս հողը հասոյթի գրեթէ միակ աղբիւրն էր Կիլիկիոյ Աթոռին։ Թիւրք կառավարութիւնը ժամանակէ մ՚իվեր աչք ընկած էր անոր վրայ, բայց այս և այն պատճառները սանձ էին դրած իր լափող ախորժակին։

Կողոպտումի գլխաւոր շարժառիթն է, ինչպէս կերևի, կովկասէն եկած նոր մուհաճիրները հոն բնակեցնելու տենչը։ Լաւ նկատի ունենալով, որ գրաւուած հողերը կը կազմեն Կիլիկիոյ հայութեան սիրտը, շատ դիւրին է հասկանալ գրաւումի իսկական պատճառը։

Անշուշտ չէ մոռացուած. դեռ երեք տարի կայ, որ կառավարութիւնը նոյնպէս խլեց Նաճարլը հայ գիւղի սեփական հողերը և բաշխեց թիւրք մուհաճիրներուն։

Հարիւրաւոր հայ բանտարկեալներ 8 ամիսներէ իվեր

առանց որևէ հարցաքննութեան կը հեծեն Հալէպի բանտի խոնաւ զընդաններու մէջ։

Կիլիկիոյ ժողովուրդը շատ է յուզուած։ Սուլթանի խոստումներէն շլացած Կաթողիկոսը՝ այս նոր հարուածի ցնցումին տակ ղինքը խաբուած զգալով՝ հրաժարած է և այժմ կը գտնուի Ադանա՝ իր ամբողջ միաբանութեան հետ։

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մի եւրոպացիի նամակէն բաղուած)

ՏՐԱՊԻԶՈՆ, ապրիլի 16

Էրզրումի դժգոհութեան արտայայտութիւնը կ'երևի թէ հոս ալ իր նշանները ցոյց պիտի տայ. արհեստաւոր և խանութպան դասակարգը կը խորհի կուսակալին բողոքել քաղաքապետութեան կարգ մը խոշոր զեղծումներուն և հարստահարութեանց դէմ, և եթէ չլսուի իր բողոքի ձայնը, այն ատեն պիտի հետևի միւս երկու վիլայէթներու օրինակին։ Արդէն հոս կառավարութեան հեղինակութիւնը լմնցած է. կուսակալ Բէշատ պէյ, թմրած ու յոգնած մարդ մը, ոչ մէկ բանի կը ծառայէ։ Վերջերս, գիշեր մը կովի գլուխ, գիշեր մ'ալ պարկով յարդ, ուրիշ գիշեր մը նոյն միտքը արտայայտող ուրիշ բան մը կախեցին իր բնակարանի դրան վրայ։ Սակայն ասոնք կուսակալին վրայ ոչ մի ազդեցութիւն չունեցան։

Կուսակալին այս թոյլ ընթացքը միջոց տուած է կարգ մը պաշտօնեաներու, որ ուզածնուն պէս կեղեքեն, հարստահարեն ժողովուրդը։ Ասոնց մէջ առաջին տեղը կը բռնեն հետևեալները, որք հազարաւոր ոսկիներ դիզեցին քանի մը տարուան մէջ։ 1) Սուլթանի կողմէ նշանակուած՝ նաւահանգիստի մէջ ճամբորդներու հսկող պաշտօնէութեան պետը, հազարապետ Նէճիպ պէյ, որ հայ ճամբորդներու արիւնը կը քամէ։ Ամերիկա գնացողներէն, նոյնիսկ ամերիկահպատակ, իւրաքանչիւրէն 6—10 ոսկի կը քաշէ։ Ասոնցմէ ոմանք երբ կը դիմեն տեղւոյս ամերիկեան հիւպատոսի փոխանորդին, օրինական պաշտպանութիւն վայելելու համար, հիւպատոսարանի թարգման Օժալվօ, գաղուձի մէկը, խորհուրդ կուտայ խեղճ մարդոց երթալ համամաձայնիլ հազարապետին հետ, որովհետև ինքն ալ թիւրք կառավարութեան գաղտնի մէկ գործակալը, լրտեսն է։ Նէճիպ պէյ այնքան սարսափեցուցած է հայերը, որ հրապարակին վրայ գտնուած շատ մը հայերէն՝ փոխառութեան անուան տակ 20—30 ոսկի կորզած է, և իր Ալլահը միայն գիտէ թէ ե՞րբ պիտի վճարէ առած գրամները։ 2) Հիւսէյն Ռուհի էֆ. որ անշշուկ կը կողոպտէ իր ճանկը ինկածը։ 3) Ընդհանուր դատախազ Էօմէր Լութֆի պէյ, որ կ'ըսի թէ շատ խոշոր կաշառք միայն կ'ընդունի։ Ասիկա խորամանկ և անխիղճ համիդեան մ'է, իր ծրագիրն է ամբողջ հայութիւնը ջնջել. իր նպատակին հասնելու համար ամեն միջոց ի գործ կը դնէ։ Դախորդ կուսակալը իրմէ զատ ուրէք հեղինակութիւն չը ճանչնալու համար՝ ընդհանուր դատախազը հաղիւ շունչը Պոլիս առաւ, սակայն այժմու կուսակալին թուլութեան հետևանքով՝ այս գաղանը խոշոր հեղինակութիւն մ'է հոս։

Այդ ոճրագործը, քանի մը ամիս առաջ, իր մէկ վրէժը լուծելու համար, ձերբակալել տուաւ քաղաքիս առաջնակարգ բեռի յանձնակատարները. Պօղոս էֆ. Մարիմեան, Օննիկ էֆ. Մախոխեան, Մկրտիչ էֆ. Մինասեան, և Ինէպէկօղլու, և օրէնքին մէկ տառէ օգտուելով՝ ասոնք Պոլիս խրկեց հսկողութեամբ, իբր քաղաքական յանցաւորներ։ Կ. Պոլսոյ մէջ բոլորն ալ անպարտ արձակուեցան շնորհիւ օտար պաշտպանութեանց, եթէ ոչ, այդ անմեղները պիտի փտէին բանտերու մէջ... 1904 ի ամառը վաճառական կայծակ Արապեանի վիրաւորուելու գործին հետևանքով՝ յիշեալ պաշտօնեան ամեն միջոց իգործ դրաւ և յաջողեցաւ յեղափոխական խումբ մը, 31 պատանիներ, իր ճանկը անցնել և բռնապետին դիմելով՝ իրատէ հանել տուաւ, որ դատարանը ամենէն խոշոր պատիժները տայ ասոնց, որ և տեղի ունեցաւ։ 1905 ի ամառն ալ այս պատանիներէն մին հիւանդանալով կը մեռնի բանտին մէջ։ Իր թաղի տղաքը և ուրիշ պատանիներ մասնակցելով յուղարկաւորութեան՝ պսակ մ'ալ կը դնեն վրան. լրտես փօլիսը կը ժողովէ մասնակցողներու անունները և ահա դատախազը 15-20 հոգի ձերբակալել կուտայ։ Ասոնցմէ ոմանք կարձակուին այլ և այլ միջոցներով, բայց ուրիշ հոգի իզուր բանտը կ'սպասէին 7-8 ամսէ իվեր։ Երեք պատանիներ էին, իսկ մէկը ահագին ընտանիքի հայր՝ Սարգիսեան անունով։ Ասոր մէկ տղան արդէն 15 տարուան դատապարտեալներուն մէջն էր, այս անգամ իրեն հետ ձերբակալած էին իր կինը և երկու տղաքն ալ. ասոնցմէ մին, հազիւ 8 տարեկան, գիշերը անկողինէն հանելով բանտ կը տանին։ Հարցաքննութեան ժամանակ ատրճանակով կ'սպառնան, որպէս զի իրենց ուզածները անոր խօսել տան, և երբ խեղճ մանուկը վախէն սարսափած՝ սկսեր է պոռալ, կանչել, այն ատեն դրամով սիրաշահել փորձած են։ Սոյն եօթ պատանեաց մէջ կար նաև հայ մը, թիւրք վարժարանի ուսանող, որ յուղարկաւորութեան ժամանակ և ոչ իսկ Տրապիզոնի մէջ էր, ինչ որ կը հաստատեն անցագրի պաշտօնական գործողութիւնները։ Ընդհանուր դատախազ ամեն միջոց ի գործ դրաւ, ինչպէս նաև տանջանք և կաշառք միանգամայն, այս պատանիներուն ըսել տալու համար, թէ իրենք ալ յեղափոխականներ են։ Սակայն այս անգամ իր ջանքերը չպսակուեցան և անցեալ շաբաթ դատարանի կողմէ հաստատուեցաւ իրենց անմեղութիւնը որ արևի պէս պայծառ էր, բայց ինչ օգուտ... Էօմէր Լութֆիներ կ'ուրացած իրենց հայատեաց կոյր զգացումներով՝ պիտի շարունակեն իրենց ոճրագործութիւնները այլ անմեղներու վրայ... Եթէ այս օրինակ անարդարութիւններ տեղի կ'ունենան այս քաղաքիս մէջ, ուր մենք-եւրոպացիներս բաւական թիւ կը կազմենք, երևակայել կրնաք թէ ինչեր կը կատարուին խորքերը, ուր ոչ եւրոպացի կայ, ոչ տեսնող և ոչ ալ հաղորդող...

ԲՈՂՈՔԻ ՆՇԱՆՆԵՐ

ԿԻՐԱՍՈՒՆ, ապրիլ 10

Հաւանօրէն դուր արդէն տեղեակ էք Կակակառավարչական այն ցոյցերուն, զոր Գասթեմունիի և Էրզրումի թուրք ժողովուրդը վերջին շաբաթներուն մէջ

ի հանդէս բերաւ, անսպասելի նորութիւն մը հայթայթելով համիդեան վարչութեան։ Փառք „Ալլահին“ որ այս անգամ թուրքն ալ կրցաւ զգալ տիրող անտանելի դրութիւնը և արտայայտել իր դժգոհութիւնը։

Գասթէմունիի ժողովուրդը յաջողեցաւ գոնէ փոխել տալ՝ կուսակալէն սկսած բոլոր պաշտօնեաները, որոնք կաշառակերութիւնը մինչև հինգ ղուրուշի (գրեթէ մէկ ֆրանք) ի չեցուցած էին։ Գասթեմունիի յաջողելով Էրզրումի ցոյցը, իր կարգին խոշոր տհաճութիւն պատճառած է Աւագ-բռնապետին, որ իր ժողովուրդը կը նկատէ իբրև հավքերութեան և խոնարհութեան անսպառ հանք մը և այդ պատճառաւ մինչև հիմա ինչ նոր տուրք որ կը նշանակէր, լի ու լի արդիւնք կուտար։ Միչդեռ այս անգամ, բարեբախտաբար, այդպէս չեղաւ։

Տաճկական տուրքերուն քանակը և տեսակը հոս թուել երկար կ'ըլլար։ Ամենէն նորերը միայն յիշենք։ ա) կովի, ձիի. էշի, խոզի և այս կարգի անասնոց տուրք բ) անհատական տուրք. գ) քրիստոնէից զինուորական տուրքին վրայ 35% յաւելում. դ) դրոշմատուրքի վրայ անհամեմատ յաւելումներ. ե) Հիճազի երկաթուղին շինելու պատրուակին տակ, հազարումէկ տեսակ պաշտօնական, վաճառականական և ուրիշ թղթերու վրայ զարնուած նորահնար դրոշմի և թղթի արժէք, զոր քրիստոնեայ տարրն ալ պարտական է անխտիր վճարել, առանց մարգարէին ուխտի երթալու միտք ունենալու. զ) ամենէն նորը, զոր այս ամսուան մէջ հաստատեցաւ, „ինպաստ գաղթականներու“ պատրուակին տակ սարքուած վիճակահանութիւնն է գանձելիք դրամին կէսը վար պիտի դրուի, միւս կէսն ալ պարգև պիտի տրուի բախտաւորներուն։

Հոս լսածին նայելով՝ Էրզրումի թուրք ժողովուրդը կենդանեաց և անհատական նորահաստատ տուրքերու պահանջման վրայ սաստիկ գրգռուած, իր բուռն զայրոյթը և բողոքը կը յայտնէ՝ խուժելով կառավարութեան պաշտօնատները։ Պօլսի բռնապետը՝ ժողովուրդը քնացնելու համար՝ իր սովորական ուղղութեամբ պաշտօնանկ կ'ընէ կուսակալը, զոր քիչ վերջը կը վերահաստատէ՝ վտանգը անցած կարծելով. ժողովուրդը շարունակելով իր բողոքի արտայայտութիւնը, սուլթան այս անգամ կը հրամայէ պաշտօնափոխ ընել Տիարպէքիրի կուսակալին հետ։ Թուրք ամբոխը, ասանկ խաբէական միջոցներով այլևս չը գոհանալով՝ կը փակէ բոլոր վաճառատուները և կ'առաջարկէ հայերուն, հետևել իրեն։ Ցոյցի միջոցին զինուորական հազարապետ Կրպաճ Մուսթաֆա էֆ. զօրքին հրաման կ'ընէ կրակել ամբոխին վրայ, և այդ ատեն երկու հոգի կը սպանուի և 2—3 հոգի ալ կը վերաւորուի։ Սոյն գործին քննութեան համար Աւագ-բռնապետը կը խրկէ իր սիրելիներէն մին, գ. բանակին ընդհ. հրամանատար, Զէքի փաշան՝ Երզնկայէն։ Կըսուի թէ վերը յիշած Մուսթաֆա էֆ. պաշտօնազուրկ կ'ըլլայ։

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

Փետրուար 4.

Ժամանակէ մ'իվեր սովը սոսկալի կերպով տարածուած է և անլուր աւերումներ կը կատարէ։ Ամբողջ գիւղեր և գաւառներ սովատանջ կը լինին։ Սովէն առաջացած հիւանդներով գիւղերը լեցուած են։ Ժողովուրդը շուարած չ'գիտեր ո՛ւր դիմել։ Իսկ անգութ կառավարութիւնը անվրդով և անողոք կը շարունակէ իր շահատակութիւնը։ Տուրքերը կը գանձուին ամենաանարդ ձևերով։ Կողոպուտի նոր ձև մըն ալ հնարեց. Համիտիէ կօչանները կը փոխէ՝ իբր թէ նոր Մարդահամար կը կազմէ։ Ամէն ոք—կին, երեխայ, տղամարդ—պարտաւոր են մարդագլուխ 100 փարայ տալ։

Քանի մը դէպքեր։ Կեմ գիւղացի Նաւօն՝ իր սայլով Արտամէտ եկած ժամանակ, կէս ճամբան օրը ցերեկով առաջը կը կտրեն երեք զինուած քրդեր. Նաւօն մահուան երկիւղէն բռնուած, կը թողնու կը փախչի։ Քիւրդերը 4 հատ լծուած եզերը կ'արձակեն և կը քշեն։ Իսկ Նաւօն ելեղապատառ, շունչը կտրած հապիւ ինքզինք գիւղը կը ձգէ՝ մեծապէս գոհ որ գէթ իր կեանքը ազատեց։ 8—10 օր առաջ կարապաշ գիւղի ջրաղացէն քշած տարած են 4 հատ եզ։

Ամիսներ առաջ քշեցին տարան Փեսան-գարէէն 3—400 գլուխ ոչխար։ Բայց ինչո՞ւ զարմանալ երբ կառավարութեան քթին տակ թալանի մատնեցին բողոքական շրջանի Ոսկեփակ գիւղը գտնուող 5—700 ոչխարի հօտը իր ամբողջ „թախրմով“, շներով միասին։ Կառավարութիւնը իբր թէ վերապացնուցած է, բայց թալանողները չեն ընդուներ.—իրենց վնասները մանրակրկիտ հաշիւ առած են և հատուցում կը պահանջեն։ Եւ ի՞նչ կասկած որ կառավարութիւնը վերջ ի վերջոյ պիտի տուժէ...

Կառավարութիւնը իբր թէ զօրք է ուղարկեր Շաքիրի (քիւրդ բէկ) վրայ։ Ինչու... Այդ գաղանը—Ներգուզ գաւառի տէր ու տիրականը—տարիներէ ի վեր ասպատակութիւններ կ'ընէ։ Կար ժամանակ, որ նա կառավարութենէն փախստական էր, բայց ամենակարող ոսկիները հաշտեցուցին զինք իր թշնամիին հետ։ Տեսնենք ի՞նչ հետևանք պիտի ունենայ։ Կառավարութեան այս անգամ խէթ աչքով նայելը Շաքիրին դէմ՝ ունի իր պատճառը։ Քիչ ատեն առաջ Շաքիրը քաղաք կուգայ իր 10—15 ղուլամներով։ Մարդ կ'ուղարկէ Բերդակ գիւղ և իրենց ձիերու համար յարդ-խոտ կը պահանջէ. գիւղացիք կը մերժեն։ Հետևա՞նքը... մի քանի օր ետք զինուած մարդիկ կ'երևին Բերդակի սարի վրայ տաւարը տանելու։ Գիւղացիք անոնց նպատակը կը հասկնան և տաւարը անմիջապէս կը քշեն դէպի ցած։ Առայժմ ոչինչ չէ պատահեր։ Բայց անկարելի է որ յարդ-խոտ չը տալու պատիժը չը կրեն գիւղացիք..

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ՎԱՐԱՆԴԱՅԻ ԵՂԵՌՆԸ

(Հեռագիրներ)

Շուշի, մարտ 25

Շուշու գաւառապետը և հաշտարար միջնորդը կօզակների մի մեծ զօրաբաժնի հետ միասին, խուզարկութիւն առնելու նպատակով՝ մտան Զանախչի, Տող և Ազոխ հայ գիւղերը, կատարեցին խուզարկութիւններ, թալէ ուեցին իրենց զանազան անօրինութիւններ, գազանութիւններ և բարբարոսութիւններ։ Կօզակները ներս խուժեցին գիւղացիների բնակարանները և ամենաանխնայ կերպով տանջանքների են-

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՍՈՍԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

(1905 մայիս—1906 մայիս)

Հայ վանական՝ների ածխացած դիակները—դագաղների մէջ լցրած։

Հին-Նախիջևանում սպանուած և այլանդակուած դիակների շարան։

թարկեցին ոտամարդկանց և կանանց։ Սարսափահար եղած երեխաները հեծկլտանքներով փախան մերձակայ անտառը։ Կօզակները փշրում էին գինով լի ամանները և տակառները, կողոպտում տների մէջ եղած գոյքը, փողերը և թանկագին իրերը. կանանց ճակատներից պոկում էին նրանց գլխի զարդերը, կոտրատում էին փակուած սնդուկները և կողոպտում իրերը։ Դրանով չը բաւականանալով, կօզակները անպատուեցին և բռնաբարեցին ամթլուած գեղջկուհի օրիորդներին և կանանց՝ յագեցնելով իրենց գազանային կրքերը . . . Ազախում հարևան Թուրքերը, առիթից օգուտ քաղելով, յայտնեցին գաւառապետին, որ Հայերը մի ժամանակ քշել տարել են նրանց տաւարը։ Չը ստուգելով այդ յայտարարութեան արդարացի լինելը, գաւառապետը և հաշտարար միջնորդը հրամայեցին Թուրքերին խլել տաւարը և այլ գոյքեր Հայերից՝ ըստ իրենց հայեցողութեան, որ Թուրքերը իսկոյն և եթ ի կատար ածեցին։ Գիւղացիները զրկուելով իրենց ամբողջ կարողութիւնից, ամենաողբալի դրութեան մէջ են գտնւում։ Լէնկթեմուրի, Չինգիզ խանի և Շահ-Աբասի օրերում տեղի չեն ունեցել այդ պիսի բարբարոսութիւններ և գազանութիւններ, որպիսիները տեղի ունեն 20-րդ դարում „քրիստոնեայ" պետութեան մէջ։

Շուշի, ապրիլ 8

Փոխարքայի կողմից նշանակուած քննիչ յանձնաժողովը, նախագահութեամբ Վէյդենբաումի, շրջում է կօզակներից աւերուած հայկական գիւղերը՝ թւով 15-ից աւելի։ Ամեն գիւղի մօտ յանձնաժողովին դիմաւորում են հոգևորականութիւնը զգեստաւորուած, ինչպէս և գիւղական հասարակութիւնը աղ ու հացով։ Սօս գիւղի մօտ, երբ քահանայ Տէր-Յակոբը մի ճառով ողջունում էր յանձնաժողովը, շեշտելով կօզակների հասարակութեանը հասցրած անպատուութիւնները և աւերումները, հասարակութիւնը լալիս էր դառնագին։ Տեսարանը սաստիկ յուզիչ էր։ Թիֆլիսի մամուլին հաղորդուած սարսափները ոչ միայն հաստատւում են, այլ և նսեմանում են իրականութեան առաջ։ Չը կայ մի գիւղ, որտեղ այրուած չը լինեն ամենալաւ տները, իրենց գոյքով։ Տող գիւղում այրուած է Մուսայէլեանի երկյարկանի տունը իր ամբողջ կարգ ու սարքով, հացի ամբարներով և մանուֆակտուրային ապրանքների պահեստով։ Ամենուրեք կօզակներին կատարեալ ազատութիւն էր տրւում։ Մի քանի գիւղերում նրանք օրեր շարունակ կողոպտում էին, ծեծում, տանջում, բռնաբարում կանանց և աղջիկներին, խլելով երբեմն նրանց հայրերի, եղբայրների և ամուսինների ձեռքերից, բռնելով նրանց լեռներում, այգիներում և անտառներում։ Հազիւ էր պատահում, որ մէկը ազատուէր ծեծից, տանջանքից և կողոպտուելուց. իսկ կանանցից ազատւում էին այդ անպատւութիւնից միայն նրանք, որոնք փախել, ծածկուել էին տների գաղտնի մասերում։ Սօսում ծեծից մեռաւ գիւղացի Հայրապետը։ Այդ մասին յայտնուած է դատախազին, բայց մինչև օրս կատարուած չէ ոչ քննութիւն և ոչ էլ դիակի հետազօտութիւն։ Այդ նոյն դժբախտի եօթանասնամեայ մայրը բռնաբարուած է կօզակներից։ Ազոխ գիւղում կօզակները պահանջեցին Խոսրով Կարապետեանից նրա կնոջը, բայց մերժում ստանալով, վայր գցեցին նրան և պղծեցին բերանը։ Նոյն գիւղում բռնաբարուած է մի կին իր ինն և երեք տարեկան երեխաների աչքի առաջև. յետոյ ստիպել են նրան համբուրել իրենց՝ կօզակների սեռական անդամները... Սօս գիւղում բռնաբարուած է մի 12 տարեկան հիւանդ աղջիկ իր ծերունի պապի աչքի առաջև, որին այնքան ծեծել են, որ ստամոքսի մէջ ներքին արիւնահոսութիւն է առաջացել։ Մգխում մի փոքրիկ աղջկայ մօտ վարակման նշաններ են երևում։ Այն, ինչ որ կօզակները չեն կարողացել հետները տանել, ոչնչացրել են. կողոպտած իրերը բարձել են ձիերին և, տանելով ռուս գաղթականների Սկօբելևկա գիւղը, մասամբ վաճառել։ Չարդաղ գիւղում կօզակի սրով վիրաւորուած է քահանան, իսկ միւս քահանայից խլել են հաղորդութեան սկիհը։ Կան մերձիմահ ծեծուածներ, անբուժելի հաշմանդամներ, վաղաժամ ծննդաբերութիւններ և վիժման դէպքեր լեռներում։ Կանայք դարձել են հիստէրիկ։ Սարսափը այնքան ուժեղ է, որ յանձնաժողովը գիւղերին մօտենալիս՝ կանայք, թէև նախազգուշացուած էին, այնուամենայնիւ փախչում էին լեռներն ու անտառները։ Կօզակները կատարելապէս ամայացրել են յիշեալ գիւղերը զինուորական և վարչական իշխանութիւնների աչքի առաջև։ Զօրամասը գործել է գնդապետ Վլովերնի, Բիւրիլկին և Հաջիեվ սպաների, գաւառապետ Փրէյլիխի, հաշտարար միջնորդ Երմալյեվի, պրիստավ Ֆիտի ղեկավարութեամբ։ Շատերի ցուցմունքով Երմալաեվը քաջալերելիս է եղել կօզակներին, շատ տների վրայ ինքն է նաւթ ածել և այրել։ Այդ բռնութիւնները հասցրել են Հայերին կատարեալ յուսահատութեան. մանաւանդ որ նրանց կողմից առիթ չի եղել և զօրքերի գալու լուրը նրանք ընդունել են ուրախութեամբ, կարծելով, որ նրանց միտումն խաղաղ է։ Ամեն տեղ Հայերը պատրաստել էին ճաշ, բնակարան և ձիերի համար ուտելիք։ Հասարակութիւնը դուրս էր գալիս աղ ու հացով, իսկ հոգևորականութիւնը խաչ ու աւետարանով, բայց ամեն տեղ Հայերին ընդունել են կոպիտ կերպով, անպատուել ու կողոպտել են։ Իշխանաւորները հրաժարւում էին Հայերի ճաշից. նրանք ճաշեցին Մէլիք-Ասլանով բէգի մօտ, որ յայտնի է Մինքենդի կոտորածի օրերից։ Զօրախումբը Թուրքերին չէր նեղացնում։ Բոլոր աւերուած գիւղերից մի քանի հազար տուգանք է վերցրած և զէնքը գրաւած։ Ազգաբնակութիւնը պատրաստ էր կատարել նրանց պահանջները, բայց և այնպէս զերծ չը մնաց ջարդ ու թալանից, որի հոգին համարւում է գլխաւորապէս Երմալյեվ։ Ականատեսների ասելով, Երմալյեվը Մուսայէլեանի տունը օդն է ցնդեցրել Մէլիք-Ասլանովի տնից բերած վառօդով։ Միայն մեղաւորներին խիստ պատժելը կարող է հանդարտացնել վրդովուած և խորապէս անպատուած ազգաբնակութիւնը։ Հայ գիւղերի դրութիւնն անտանելի է եւս առաւել այն պատճառով, որ ինչպէս աշնանը, այնպէս էլ այժմ, Վարանդայի ազգաբնակութիւնը զրկուած լինելով պաշտպանութիւնից, հնարաւորութիւն չունի կատարելու դաշտային աշխատանքները։ Հայերը պաշտպանութիւն են խնդրել գեներալ-նահանգապետ Ալֆտանից, բայց խնդիրը չէ յարգուել։ Ազգաբնակութեանը սով է սպառնում։

Շուշի, ապրիլ 9

Ապրիլի 7-ին Երմալաեվն ու Հաջիեվը երկու հարիւր կօզակներով և արտիլլերիայով մտան Գունէյ գիւղը՝ պատճառաբանելով իրենց արշաւանքը երկու Թուրքերի իբր թէ վիրաւորուելը Հայերից։ Գիւղը մտնելիս յարձակուեցին հովիւների վրայ, որոնք սարսափահար դիմեցին փախուստի։ Սրանց փախուստից օգտուելով Թուրքերը քշեցին 12 գլուխ տաւար։ Զօրախումբը կանգ առաւ գիւղի ստորին մասում։ Կանայք, երեխաները աղաղակով սարսափահար փախչում էին լեռներն ու անտառները՝ տանելով իրենց հետ ինչ հնարաւոր էր։ Զօրախումբը մտնելով գիւղ, պահանջեց տալ այն անձերին, որոնք սպանել են Թուրքերին։ Ժողովուրդը չէր կարող կատարել պահանջը՝ չունենալով դէպքի մասին և ոչ մի լուր։ Զօրախումբը սկսեց ռմբակոծել գիւղը, արձակելով 11-12 անգամ թնդանօթ. քանդւեց Միրզա Սարգսեանի երկյարկանի տունը, որը յետոյ այրեցին։ Կատարելով այս ամենը, զօրախումբը ուղևորուեց Գունէյ-Չերդախ։ Այստեղ կանչւեց գիւղի քահանան, որի վրայ բռնութիւն գործելով ստիպմամբ վերցրին ստորագրութիւն՝ թէ—իրենց առաջի գալստեան միջոցին բռնաբարման ոչ մի փաստ չէ տեղի ունեցել զօրքի կողմից։

Շուշի, 11 ապրիլի

Չը նայելով, որ Վէյդենբաումի յանձնախումբը հաստատեց այն փաստերը, որոնք վերաբերում էին բռնութիւններին, հրդեհներին և թալաններին, այլ և այն, որ դրանց նախաձեռնողներն եղել են ադմինիստրատորներն ու սպաները, անպատիժ անելով իրենց օֆիցերական մունդիրը. վերջապէս չը նայելով, որ փոխարքան՝ դէպքերի ճշմարտութիւնը տեղում ստուգելու համար կարգադրեց, որ պաշտօնից հեռացուած լինեն այդ պարոնները մինչև քննութեան վերջանալը, այնուամենայնիւ նրանք շարունակում են իրենց՝ ժողովրդին կորստի մատնող բռնաւոր գործունէութիւնը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(Երեսունութերորդ նամակ)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի

Ողորմութիւն արէք, խղճացէք։

Աղերսանքի, մուրացկանութեան, սուգի ծանր խօսքեր, որոնք վշտաբեր մրմունջով հնչում են այն բոլոր վայրերից, ուր հպատակն ու կօզակը, քաղաքականութեան անիծած ճակատագրով, ստիպած են ապրել կողք կողքի, մինը տանջելու, միւսը տանջելու պաշտօնով...

Ողորմութիւն արէք, խղճացէք—ահա օրւայ երգը, որ լալկան ձայնանիշներով գեղգեղում են ժողովրդի ցաւերով մորմոքուողները բոլոր քաղաքներում ու աւաններում, գրւած ցարերի երկգլխեան վիշապի—ափսոս է արծիւ բառը—օգոստափառ հովանու ներքոյ։

Լաց ու աղերսանք բոլոր կողմերից։ Ահա Վրաստանը—քաղցած ու սգաւոր։ Ահա Վարանդը—կրծքապատառ ու մերկ։ Ահա Արարատեան դաշտը—սովատանջ և ահաբեկ։ Ահա Ղարաբաղի կենտրօնը—կարօտ ցորենի՝ ստամոքսը կերակրելու և շորի՝ մերկութիւնը ծածկելու համար։ Ահա Զանգեզուրը—հացի պատառը որկորում մնացած։ Ահա Նախիջևանը—աւերակների վրայ նստած, անհաց և անջուր։ Ահա մեծ քաղաքները—լի... սարսափով և փախուստով։ Ահա փոքր գիւղեր—անճար ու յուսահատ։

Անդրկովկաս է այդ „քանդվածի“ անունը։

Գեղա՜նի երկիր, բանաստեղծական՝ իր սիրուն սար ու ձորերով, հմայիչ՝ բնութեան այնքա՜ն առատ պարգևներով, ընդունակ՝ լինելու հարուստ, բարեբեր, երջանիկ, կարող՝ կերակրելու իր որդիքը,—այժմեանից հինգ անգամ աւելի—հաց տալու իր հրամայողին, դրացուն, եկեորների ամբողջ բանակներին,—որ, սակայն, դատապարտւած է ինքնակալ թաթով՝ աւերմունքի, սրածութեան, քաղցի ու մուրացկանութեան...

Մուրացկան է ամբողջ ժողովուրդը։

Դժբախտարան՝ ամբողջ հայրենիքը։

Եւ կովկասեան թերթերը—ա՜խ, որքա՜ն ծանր է նրանց ընթերցումը—լի են աղերսական ծանուցումներով, գրւած նպաստամատոյցների կողմից, աղեխարշ կոչերով, ուղղած մի շրջանի դժբախտներից միւս շրջանի ազգակիցներին, օգնութեան և նպաստի անվերջ, անթիւ հրաւէրներով, յօգուտ դժբախտացածների, որ ամբողջ ժողովուրդն է, ի պաշտպանութիւն դժբախտարանի, որ համայն երկիրն է...

Ահա մի քանիսը այդ կոչերից։

„Թալանւած գիւղերը—ասում է նպաստամատոյց մասնախումբը—հաց, շոր, դրամ են խնդրում։ Բազմաթիւ շինական հասարակութիւններ եզ և գութան չունին, որ վար ու ցանք անեն ու առաջիկայ ամիսներին սովամահ լինելու վիճակից ազատ մնան։ Կառավարութիւնը շարունակում է հարկերը պահանջել, գիւղերի վրայ դրւած տուգանքները հարիւր հազարների են հասնում, աշխատանքը դադրած է, երթևեկութիւն չը կայ, առևտուրը կանգ է առել... Այդ ահագին կարիքներին լիութիւն տալու համար պէտք է հասարակաց լայն աջակցութիւն, բարեգործական մեծ զոհաբերութիւն։ Օգնութեան եկէք. մեծ է կարիքը“։

„Արդէն երեք ամիս է,—գոչում է Թիֆլիսում կազմւած վրացիական յանձնաժողովը—որ Վրաստանը հեծեծում է սոսկալի աղէտների ճիրանների մէջ։ Դեռ քիչ առաջ բազմաթիւ ծաղկած գիւղեր, աւաններ և քաղաքներ վերածւել են ախուր աւերակների։ Եւ այդ աւերակների մէջ կան հազարաւոր մարդիկ, որոնցից խլւած է ամեն բան — մերձաւորների կեանքը, բարեկեցութիւնը և ծանր աշխատութեամբ ձեռք բերւած անտեսութիւնը։ Սպառնալից ուրուականի նման կանգնած է թշւառացած երկրի վրայ մի նոր սոսկալի թշնամի—սովը, որը արդէն սկսւել է մի քանի տեղերում։ Ոչ մի բան, բացի արագաբար և եռանդով կազմակերպւած հասարակական օգնութիւնից, անկարող է փրկել կործանւած ժողովուրդը։ Մնալ այլ ևս առն և անտարբեր դէպի նրա ճակատագիրը՝ անկարելի է։ Պէտք է հաւաքել բոլոր այժերը և լայն կերպով բացած արտով՝ օգնութեան հասնել այդ ժողովուրդին։ Ամեն մի կոպէկ կը թեթևացնէ թշւառների և խեղճերի աղէտը։ Ուրեմն շտապեցէ՛ք ամենքդ, միացած բարի զգացմունքով, եղբայրաբար օգնելու տանջւողներին՝։

„Վերջին խռովութիւնների պատճառով—այդպէս է սկսում իր հրաւէրը Էջմիածնի նորակազմ յանձնախումբը—ուտելիքի և անհրաժեշտ պիտոյքների սաստիկ թանգանալը, այլ և հայ-թուրքական ընդհարումների ժամանակ եղած աւերածները խիստ ծանր հետևանքներ ունեցան, ի թիւս այլոց, և Երևանի նահանգի շատ գիւղերի հայ ժողովրդի համար։ Ցնտեսական նեղ վիճակը ոչ միայն շատ աղքատների սով է սպառնում, այլ և շատ ծնողներ զրկւած են իրանց զաւակների ուսման վճարը հատուցանելու հնարաւորութիւնից և առաջիկայ ուսումնական տարւայ սկզբին շատ երեխաներ ստիպւած պիտի լինեն հեռանալ դպրոցից։ Այսպիսի հանգամանքներում բարեգործական ընկերութիւնների և մասնաւոր անձանց սովորական օգնութիւնը բաւական չէ. միանուագ խոշոր գումար է հարկաւոր աղքատ ընտանիքներին օգնութիւն հասցնելու և չքաւոր երեխաների ուսման վճարը հատուցանելու համար։ Այս նպատակով, ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ և Կովկասի Փոխարքայի թոյլտւութեամբ, որոշած է մայիսի 21-ին Էջմիածնի անտառում կազմել մի ժողովրդական զբօսանք և վիճակախաղ, և դրանից ստացւած գումարը գործ դնել հայ ժողովրդի յիշեալ կարիքների համար։ Միանգամայն վստահ լինելով Ձեր գթասրտութեան և բարեգործական պատրաստականութեան վրայ՝ զբօսանք կազմողները խոնարհաբար խնդրում են ձեզ, որ չը զլանաք օգնելու գրամով կամ վիճակախաղի համար իրեղէններ նուիրելով, որի մասին ժամանակին հաշիւ կը տպագրւի պարբերական մամուլի մէջ“։

Եւ այդպէս շարունակ ու անվերջ...

Ունայն, ապարդիւն կոչեր, անզօր՝ դարման անելու լայնաքերան վէրքերին։ Եւ այդ վէրքերն իսկ վերջ չունին։ Հասարակաց բարեգործ աջը այսօր մի քանի կտոր շոր, մի քանի արծաթ կը տայ աւերւած, ծխացող գիւղին, քանի մի նպաստներ քարուքանդ գաւառակին, բայց դեռ երեկւայ արտասուքը չը ցամաքած, նոր արտասուք և նոր արիւն կը հոսի մի այլ գաւառի մէջ, անմեղ գիւղերի այլ շրջանում, ուրիշ քաղաքներում, ուր բնակչութիւնը իրեն կարծում է անվտանգ և հանգիստ, հեռու կօզակային արշաւանքից։ Անցած փաստերը դրան ապացոյց։ Բագւի արիւնոտ օրերին, երբ սարսափահար ժողովուրդը դէպի Թիֆլիս էր փախչում, կամ Նախիջևանի թալանի և հրդեհի ժամանակ, երբ ամենքը երանի էին տալիս բարձրագիր Շուշու բնակիչներին, ո՞վ կարող էր երևակայել որ արիւնն ու թշւառութիւնը յաղթանակօրէն գլուխ կը բարձրացնի և այդ վայրերում, ապահով և հանգիստ քաղաքների սրտի մէջ։ Ո՞վ կարող էր երևակայել՝ Թիֆլիսի

փողոցներում Բօրչալուի մահմեդական խուժանին հանդիպել, և կամ Գանձակի մէջ ոստիկանութեան և բէկութեան շաղկապած յարձակումը կրել։ Կամ ո՞ւմ մտքով կ'անցնէր, թէ մի օր վրացուհիները քութայիսի մէջ, և հայուհիները Վարանդայի շրջանում՝ կօզակների գազանութեան կը յանձնուին, „յանուն օրէնքի և արդարութեան", ռումբի բերան տալով և՛ տուն, և՛ եկեղեցի, և մարդիկ..

Աղերսանքին՝ մտրակ, լացին՝ ծիծաղ - ահա լիրբ պատասխանը, որ բոլոր չարիքների ոճրագործ հեղինակը—ցարիզմը—տալիս է աջ ու ձախ, և՛ այնտեղ ուր ըմբոստներ կան, և այնտեղ, ուր միայն „հլու հպատակներ" են նստած, մի պատասխան, որ տրուեց անցեալ տարի, տրուում է և այս տարի, կը տրուի և՛ յաջորդ տարին, քանի կանգուն է ոճրի հեղինակը՝ ալբիւրը բոլոր չարիքների...

Delenda Carthago!

Կոպէկ-կոպէկ նուէրներ հաւաքեցէք, կաղմեցէք հին շրջերի կապոցներ՝ որքան հաւաս ունէք, կարկատան դրէք բարուքանդ տների պատերին, աղերսանք թափեցէք լրագրական ամբիոնից, նկեղեցու սեղաններից, յօգուածներով, կոչերով, կոնդակներով, զարկեցէք ունեւորի և բախտաւորի բարեգործական զգացմունքներին — այդ բոլորը, այո՛, սփոփիչ է մերկ ու քաղցած դըժբախտների համար, և մխիթարանք՝ դրանց ցաւերով մորմոքուողներին. բայց դա տանջանքի վախճանը չէ, և ոչ էլ նոյնիսկ վախճանի սկիզբը...

Հեղեղը չէ, որ քանդեց մեր տները, և ոչ էլ պատահական հրդեհի զոհ են մեր քրտինքի, մեր աշխատանքի, մեր երկունքի պտուղները։ Մեր ցանքսերը կարկուտից չը փչացան։ Մեր անբաւ դիակների պատճառը արկածը չէ, կամ վարակիչ ժանտախտը։ Այդ աւերիչ հեղեղը, այդ լափող հրդեհը, այդ մահաբեր ժանտախտը մի անուն ունի—ցարիզմ։

Մեր միակ ապահովագրութիւնը նրա անկման մէջն է։ Քանի կանգուն է բռնապետութիւնը՝ ապահով չէ ոչ մի անկիւն—ո՛չ տունը, ո՛չ դպրոցը, ո՛չ պատիւը, ո՛չ խօսքը, ո՛չ իսկ կեանքը։ Կը քանդի, երբ կը կամենայ. կը ների, երբ կ'ուզենայ։ Տեղը եկած ժամանակ քննիչ կ'ուղարկէ, տեղը եկած ժամանակ՝ կօզակ։ Մի օր ազատութիւն մամուլի, միւս օր խափանումն։ Մի ծայրում պարլամենտ, միւս ծայրում՝ կոտորած։ Ցարիզմի պատկերն է այդ։

Delenda Zarismus! այս պիտի լինի մեր կոչը, ուղղած ըմբոստութեան զինուորներին, մեր միակ հրաւէրն ու քարոզը աւերակների վայրերում, մեր հաւատոյ հանգանակը, գրուած մարտական դրօշակի վրայ։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

II

Դառնանք սօցիալիստ-յեղափոխականների ծրագրին, տեսնենք դէպի ո՞ւր են ուղղուած նրանց մօտակայ ջանքերը, ի՞նչ են մտադիր նրանք պաշտպանել և խլել կառավարութիւնից՝ իրենց կուռվ, որպի՞սի բարիքներ են խոստանում Ռուսաստանի համայն բնակչութեան, վերջնական նպատակի—սօցիալիզմի իրագործման ճանապարհին։

Ռուսաստանի բնակիչը—ինչ ազգի, դասակարգի և տնտեսական կացութեան էլ պատկանի նա, զրկուած է առայժմ քաղաքական և մարդկային ամենատարրական իրաւունքներից։ Նա քաղաքացի չէ և ոչ էլ ազատ անձնաւորութիւն, այլ „հլու-հպատակ" և սարուկ։ Այստեղից անհրաժեշտօրէն հետևում է, որ պէտք է ազատութիւն տալ ռուսաստանցուն, պէտք է ազատել նրան քաղաքական ճորտութիւնից և ճանաչել նրա մարդկային ու քաղաքական իրաւունքները։ Այս տեսակէտից սօցիալիստ-յեղափոխականների պահանջները էապէս ոչնչով չեն տարբերւում ուրիշ պրօգրեսիվ կուսակցութիւնների պահանջներից։ Ասում ենք՝ էապէս, որովհետև սօցիալիստ-յեղափոխականները de facto ձևակերպում և պարզաբանում են մարդու և քաղաքացու „անկապտելի իրաւունքների" վսեմ սկզբունքը, աւելի որոշ, աւելի ճիշտ և որ գլխաւորն է աւելի հետևողական կերպով, քան թէ օրինակ՝ հէնց „ժողովրդի ազատութեան" կուսակցութեան կողմնակիցները, այն է՝ սահմանադիր-ռամկավարները։ Եւ այլ կերպ չեն էլ կարող վարուել այն մարդիկ, որոնք իրենց նպատակ են դարձրել՝ ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են „անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար"։

Մարդու իրաւունքնե՞ր։—Արիւնաթաթախ տառերով են գրուած դրանք կուլտուրական ժողովուրդների պատմութեան էջերում։ Եւ ո՞վ չի լսել, թէ ինչումն են կայանում այդ իրաւունքները։ Մարդն ազատ է ամեն բանի մէջ հետևելու իր խղճի ազդեցութեան և թելադրութեան. ազատ է արտայայտելու ի լուր բոլորի գրչով և խօսքով իր հայեացքներն ու դաւանանքները. ազատ է դաշնակցելու իր համանմանների հետ, այս կամ այն ընդհանուր նպատակների իրականացման համար ազատ է ընտրելու իր ճաշակին և կոչման համապատասխան պարապմունքներ. ազատ է անարգել և առանց հսկողութեան ապրել այնտեղ, ուր ինքն է ցանկանում—ահա այն տարրական իրաւունքները, կամ եթէ ուզում էք, ազատութիւնները, առանց որոնց անմիտ և անիմաստ է մարդ հասկացողութիւնը։ Խլեցէք նրանից ազատ ինքնորոշման իրաւունքը և ձեր առաջ կը պատկերանայ ոչ թէ բանականութեամբ օժտուած, տենչանքներով թեւաւորուած „աստուածային կայծի" կրողը, այլ „վարտիկաւոր երկոտանիների" խղճուկ ներկայացուցիչը, այնքա՜ն տարածուած աշխարհի երեսին, ընդունակ միմիայն „կենդանիների ընտանիքում առաջին կենդանին կոչուելու"։

Սակայն մարդու պատկերի հետ անխզելի կերպով շաղկապուած ազատութիւնների իրականացման համար անհրաժեշտ են քաղաքական և տնտեսական համապատասխան ձևեր։ Չը կայ մարդու իրաւունք առանց քաղաքացու իրաւունքի։ Միմիայն ազատ քաղաքական կազմակերպութեամբ, միմիայն իւրաքանչիւր քաղաքացու իրական և ոչ թէ ֆիկտիվ մասնակցութեամբ քաղաքական և հասարակական կեանքի մէջ, միմիայն ինքնավարութեան սկզբունքի ազատ

և բազմակողմանի կիրառութեամբ է հնարաւոր պահպանել մարդու „անկապտելի իրաւունքները“։ Ժողովուրդը ինքը պէտք է որոշի իր քաղաքական կամքը, ազատութիւնը. ինքը պէտք է զեկավարի իր վիճակը—և այն ժամանակ միայն նա կը լինի ոչ թէ պանուրգեան հօտ, ոչ թէ „հլու հըպատակների“ մի ծնկաչոք ամբոխ, այլ ազատ անձնաւորութիւնների մի ամբողջութիւն, միացած ընդհանուր շահերով և ձգտումներով, կապած համերաշխ գործունէութեամբ և փոխադարձ շահերի կապերով։

Սակայն սա դեռ քիչ է։ Երկրիս վրայ չը կան, եթէ կարելի է այսպէս ասել, հանրամարդեր, այլ կան մարդիկ զանազան ցեղերի և ազգութիւնների, որոնց ներկայացուցիչները դրոշմած են որոշ ցեղական և ազգայնական յատկութիւնների կնիքով։

Այս կամ այն ազգութեան պատկանող մարդը բնականօրէն, ուրեմն և լիովին արդարացիօրէն, ձգտում է արտայայտելու իր ոգին այնպիսի ձևերով, որոնք համապատասխան են նրա ազգային առանձնայատկութիւններին։ Այս տեսակէտից նա նոյնպէս ազատ պէտք է լինի։ Պատմական ճակատագրի կամքով նա ոչ միայն մարդ է, այլ և ֆրանսիացի, ռուս, լեհ, հայ և վրացի կամ հրէայ և որպէս դրանցից մէկին ու մէկին պատկանող՝ նա պահանջում է ազգային ազատ ինքնորոշում։ Արդ, իրաւունք ունի՞ արդեօք որևէ մէկը, առանց բռնանալու նրա ոգու վրայ, առանց ձեռնամուխ լինելու նրա, որպէս մարդու, անկապտելի իրաւունքին, արգելել նրա ազգային ինքնուրոյնութեան ձգտումը, եթէ միայն այս դէպքում չեն վնասւում ուրիշ ազգութիւնների նոյնքան օրինական ձգտումները։ Այս հարցին երկու պատասխան չը կայ և չի էլ կարող լինել, քանի որ անհատական ինքնորոշման լիակատար իրաւունքը ինկատի ունի նոյնպէս և ազգային ինքնորոշման անպայման իրաւունքը։

Հէնց այսպիսի ընդհանուր տեսական սկզբունքների վերայ է հիմնուած սոցիալիստ-յեղափոխականների ծրագրի այն մասը, որը ռուս բնակչի քաղաքական և իրաւական կեանքին է վերաբերում և որը հակիրճ կերպով կարելի է ձևակերպել հետևեալ պահանջների մէջ։

1) Խղճի, խօսքի, մամուլի, ժողովների, միութիւնների, տեղափոխութեան և պարապմունքների ընտրութեան լիակատար ազատութիւն։

2) Անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն։

3) Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունք ամեն մի քաղաքացու համար, ոչ պակաս քսան տարեկանից, առանց խտրութեան սեռի և հասակի։ Այսպիսի սկզբունքների վերայ հիմնուած ռամկավար սահմանադրութիւն, նահանգական ու համայնական (թէ քաղաքային և թէ գիւղական) լայն ինքնավարութեամբ։ Յարաբերական ներկայացչութիւն. ժողովրդական ուղղակի օրէնսդրութիւն, այսինքն քաղաքացիների բեֆերենդում և ուղղակի օրէնսդրական ինիցիատիվ, անկախ, գուցէ և հակառակ-պարլամենտի անդամների ցանկութեան։

4) Իրաւունք՝ ընտրելու, փոխելու և դատի ենթարկելու պաշտօնական անձանց, ի բաց չառնելով պատգամաւորներին և դատաւորներին։

5) Ճանաչել առանձին ազգութիւնների ազատ ինքնորոշման անպայման իրաւունքը և որքան հնարաւոր է՝ ֆեդերատիվ հիմունքների վերայ դնել նրանց յարաբերութիւնները։ Իրաւունք տալ ամեն մի ազգութեան՝ իր թւին յարաբերական մասն ունենալ բիւդջէի մէջ, նախատեսուած կուլտուրական-կրթական գործի համար։ Մայրենի լեզուի ներմուծումն տեղական, հասարակական և պետական բոլոր հիմնարկութիւններում։

6) Ընդհանուր, պարտադիր կրթութիւն պետութեան հաշուով։

7) Եկեղեցու անպայման բաժանումն պետութիւնից և կրօնի յայտարարումն իբրև ամեն մի անհատի մասնաւոր գործ։

8) Վերացնել մշտական զօրքը և նրան փոխարինել ժողովրդական միլիցիայով*։

Կատարելապէս կողմնակից ազատ անձի և պաշտպան ժողովրդական կամքի, սոցիալիստ-յեղափոխականները միաժամանակ երևան են գալիս և իբրև աշխատանքի կուսակցութիւն, այնքան, որքան վերջինս անհրաժեշտ տարրն է կազմում անհատի նորմալ գոյութեան և աղբիւր՝ ժողովրդական բարեկեցութեան։

Ռուսաստանի ամբողջ տնտեսական կեանքը պահպանում է աշխատանքի շահագործմամբ, հիմնուած աշխատող մեծամասնութեան լիակատար հպատակութեան վրայ, հանդէպ արտոնաւորուած փոքրամասնութեան։ Տնտեսական սնապահովութիւնը, անտանելի և ուժասպառող աշխատանքի հետ միասին, մարդկային ամենատարրական պահանջներին բաւարարութիւն տալու անկարելիութիւնը, առօրեայ հակառողջապահական կենցաղը, որը յաճախակի հասցնում է հիւանդութեան և վաղաժամ զառամութեան և նոյնիսկ մահուան, մտաւոր ընդունակութիւններ զարգացնելու և հոգեկան պահանջներին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ ազատ ժամանակի բացակայութիւնը—ահա սովորական վիճակը այն մարդկանց, որոնք կարիքից և քաղցից ստիպուած՝ շաղկապուած են աշխատանքին։ Կարիք չը կայ ասելու, որ միմիայն սոցիալիստական համայնքի մէջ կ'իրագործուի աշխատաւոր մասսաների ազատութիւնը տնտեսական ճորտութիւնից։

Բայց նոյնիսկ այժմ, բուրժուական—կապիտալիստական կազմի սահմաններումն էլ կարելի է մտցնել մի շարք օրէնսդրական միջոցներ, որոնց նպատակը կը լինի պաշտպանել քաղաքային պրոլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան հոգեկան և ֆիզիքական ուժերը, և այդպիսով զօրացնել նրանց ընդունակութիւնները՝ կռուելու յօգուտ սոցիալիզմի։ Առանց սոյնանման բարեփոխութիւնների՝ „մարդու և քաղաքացու իրաւունքների յայտարարումը“ ինքն ըստ ինքեան շշոփելի կերպով չի թեթևացնի աշխատող մասսաների դրութիւնը, այլ գուցէ և երևան գայ իբրև դառն հեգնութիւն նրանց հասցէին—իրաւունք „ազատօրէն“ հաշմանդամ լինելու թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս, իրաւունք

---

* Այս բոլոր պահանջները մենք վերցրել ենք սոցյեղափոխականների համաժողովում վաւերացրած ծրագրից։

„ազատօրէն“ զոհելու կենսական բոլոր ուժերը յօգուտ կապիտալի և իշխանութեան, իրաւունք „ազատօրէն“ մեռնելու... և Աստուած գիտէ թէ ուրիշ էլ ինչ բախտաւորութիւններ...

Ահա թէ ինչու սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը ոչ մի կերպ չը նսեմացնելով քաղաքական ազատութեան վայելքները, պնդում է սօցիալական ըմբռնումների անհրաժեշտութեան վրայ, որոնց իրականացմամբ բանւոր դասակարգը հնարաւորութիւն կ'ունենայ օգտուել ա՛յն բոլոր բարիքներից, որոնք կապուած են „մարդու և քաղաքացու իրաւունքների յայտարարման հետ“:

Այս հասարակական բարենորոգումները պէտք է ընդգրկեն Ռուսաստանի հասարակական-տնտեսական կեանքի բոլոր խաւերը: Այս օրինակ սօցիալական բարենորոգումների տարրական անհրաժեշտութեան հետ միասին՝ Սօցիալիստ-Յեղափոխականները ունեն մի շարք ծրագրական պահանջներ ևս, որոնք վերաբերում են բանւորական օրէնսդրութեան, ֆինանսական քաղաքականութեան և հողային յարաբերութիւնների կազմափոխութեան: Արդ՝ ինչ բարենորոգումների պէտք է ձեռնամուխ լինել՝ յօգուտ քաղաքային պրոլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան: Սօցիալիստ-Յեղափոխականները այս հարցին իբրև պատասխան՝ հետևեալ պահանջներն են դնում.

1) Բանւորական օրւայ կրճատումն, համապատասխան բնական և գիտական առողջապահութեան:

2) Աշխատանքի վարձատրութեան նւազագոյն չափի որոշումն, ինքնավար օրգանների և բանւորական պրոֆեսսիոնալ միութիւնների համաձայնութեամբ:

3) Ապահովագրութիւն դժբախտութիւններից, ծերութիւնից և հիւանդութիւններից առաջացած անգործութեան դէմ, պետութեան և տէրերի հաշւով, ապահովագրողների ինքնավար սկզբունքների վրայ:

4) Աշխատանքի օրէնսդրական ապահովումն, արդիւնաբերութեան և առևտրի բոլոր ճիւղերում, համաձայն գիտական առողջապահական պահանջներին, գործարանական տեսչութեան հսկողութեան ներքոյ, ընտրուած բանւորների կողմից:

5) Բանւորների պրոֆեսսիոնալ կազմակերպութիւններ և պրոգրեսիվ կերպով զարգացող նրանց մասնակցութիւնը՝ աշխատանքի ներքին կանոնաւորման գործում, արդիւնաբերական հիմնարկութիւնների մէջ:

Աշխատաւոր մասսաները կրկնակի ճիրանների տակ են գտնւում — նրանց ճնշում են երկու կողմից, նրանց շահագործում է և՛ կապիտալը, և՛ „իշխանութիւնը“: Դրանից բղխում է այն բնական ձգտումը, որ աշխատանքի ներկայացուցչին պէտք է պաշտպանել՝ թէ քաղքենու (բուրժուազիայի) ընչաքաղց միտումներից և թէ՛ բիւրօկրատիայի գիշատիչ ասպատակութիւններից: Եւ վերջինս հնարաւոր է միմիայն կառավարութեան ֆինանսական քաղաքականութեան արմատական բարենորոգմամբ:

Հարկերի և դրա հետ կապուած պետական եկամտի ամբողջ լուծը ծանրանում է ազգաբնակութեան նոյն անապահով դասակարգի — աշխատաւորների վերայ: Այդ չ'պէտք է՞ տեղի ունենայ, բացականչում է սօց.-յեղափոխականների ծրագիրը և մի շարք միջոցներ է ցոյց տալիս կործանելու այդ լուծը: Ո՞րպիսի միջոցներ են դրանք: Նրանք հանրածանօթ են,—ոչնչացումն անուղղակի հարկերի, բացառութեամբ պճնանքի առարկաների հարկերից. ոչնչացումն առհասարակ ա՛յն բոլոր հարկերի, որոնք աշխատանքի վերա՛յ են ծանրանում. ոչնչացումն հովանաւորական մաքսի. ներմուծումն ժառանգային և եկամտային պրոգրեսիվ տուրքերի, ազատելով այն մանր եկամուտները, որոնք օրէնքով որոշուած նօրմայից ցածր են:

Այժմ մենք գալիս ենք սօցիալ.-յեղափոխականների պահանջների ամենաբնորոշ կէտին,— ա գ ր ա ր ա յ ի ն ծրագրին, որը նրանք պաշտպանում են այնքա՞ն տոկուն և խելամիտ կերպով, չնայած այն կատաղի յարձակումներին, որոնք տեղի ունեն երկու դիրքերից— ուղղափառ Մարկսիստների և այսպէս կոչուած „բեռել քաղաքականութեան“ գիտուն ներկայացուցիչների, այն է սահմանադիր-ռամկավարների կողմից: Կանգ առնելով իր ագրարային ծրագրի զարգացման ընդհանուր հիմունքների վերայ, սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը յայտարարում՝ է, որ „հողային վերակազմութիւններին վերաբերեալ հարցերում ինքը կ'յենւի, յանուն սօցիալիզմի և բուրժուա-սեփականատիրական սկզբունքների դէմ մղած կռւի, ռուս գիւղացու համայնական և աշխատաւորական հայեացքների, նրանց մէջ տարածուած այն համոզմունքի վերայ, որ „հողը ոչ օքինը չէ, և որ նրանից օգտուելու իրաւունքը աշխատանքն է տալիս միայն“ (ծրագրից): Այն դարաւոր, աւանդական լոզունգը՝ „հողը Աստծունն է, իսկ բարիքներից օգտուելը՝ աշխատաւորին“ սօցիալիստ-յեղափոխականները փոխեցին հետևեալ պահանջով՝ „հողերի համայնացումն“ — մի տերմին, թէև բազմաթիւ կեղծ բացատրութիւններ յարուցանող, բայց իր էութեամբ կատարելապէս որոշ:

Այդ արտայայտութիւնը այսպէս պէտք է հասկանալ: Առանձին անհատների կամ խմբակների մասնաւոր սեփականութեան իրաւունքը ոչնչացում է. հողը դառնում է համաժողովրդական սեփականութիւն՝ պարտադիր, օրէնսդրական որոշ կարգով սահմանուած եղանակով, առանց յետգնման:

„Ոչ օքինը“ չը լինելով, հողը դրւում է կենտրոնական կամ տեղական ժողովրդական ինքնավար օրգանների, այսինքն, անդասակարգ գիւղական և քաղաքային համայնքների խնամատարութեան տակ: Որպէս ամբողջ ժողովրդին պատկանող ընդհանուր սեփականութիւն, հողը դուրս է գցւում ապրանքային շրջանառութիւնից, այսինքն արգելւում է գնել կամ ծախել, կապալով տալ կամ վերցնել. նրանից կարելի է միմիայն օգտուել և այս դէպքում՝ իւրաքանչիւրը այնպիսի բաժին է վերցնում, որ կարողանայ մշակել լինի դա սեփական ջանքերով կամ ընկերակցութեամբ: Այսպիսով հողի ունակութիւնների շահագործման իրաւունքը գնւում է նրա վրայ գործ դրւած անձնական և համայնական աշխատանքով: Այլ իրաւունք հողի վերաբերմամբ, սօց.-յեղափոխականների կարծիքով, չէ կարող լինել և չը պիտի լինի:

Եւ այսպէս սօցիալիստ-յեղափոխականների ռազմական դրօշը զարդարւում է երեք համահաւասար գեցիկ լոզունգով՝ ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն ա զ ա տ ո ւ թ ի ւ ն, ա շ խ ա տ ա ն ք և ա զ ա տ ո ւ թ ի ւ ն, հ ո ղ

և ազատութիւն։ Դրանց համար էին մաքառում դեկաբրիստները, դրանցով էր ոգևորւում Գերցենը իր համախոհներով, յանուն նրանց էին կռւում Ռուսաստանի լաւագոյն մտածողները—Չերնիշևսկի, Լաւրով, Միխայլովսկի։ Այդ գաղափարների ազդեցութեան տակ զարգացաւ զեմլեվոլցիների և նարոդովոլցիների հերոսական ոգեւորութեամբ լի էպոպէան։ Եւ ահա նոյն դրօշն է, որ բարձր ծածանւում է սոցիալիստ-յեղափոխականների, թէև երիտասարդ, բայց ուժեղ մարտիկների վերայ—ուժեղ՝ Ռուսաստանի յեղափոխական անցեալի հետ ունեցած գաղափարական կապերով, ուժեղ՝ ժողովրդական լայն մասսաների համակրանքով, ռազմական եռանդով, ինքնազոհութեան անսպառ պահեստով։

Սրանով վերջացնենք. ասելացնենք միայն, որ սոցիալիստ-յեղափոխականների կռւի եղանակների մասին մենք առիթ կունենանք խօսելու, երբ կանգ կ՚առնենք քաղաքական այլ կուսակցութիւնների տակտիկայի վրայ։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻՆ

Մենց սացանք Բրիւսելի „Միջազգային սոցիալիստական բիւրոյ“ նեստեւեալ կոչը՝ „Դրօշակի“ էջերում տպագրելու համար։

Միջազգային սոցիալիզմը ընտրել է մայիսի մէկը, կազմակերպելու համար տարեկան ցոյց՝ բոլոր այն երկրներում, ուր պրոլետարը հասել է իր դասակարգային շահերի գիտակցութեան—մի ցոյց, որի պարզ և ազդու ձևը գործադուլն է։

Այդ ցոյցը մի պարբերական ազդարարութիւն է ուղղած կապիտալիզմին. դրանով աշխատաւոր դասը երևան է հանում իր անհատների կամքը՝ հետամտելու իր ամբողջական ազատագրման, թոյլ չը տալով, որ իր ուշքը ջլատեն և գրաւեն դէպի այլ կողմ՝ զանազան արիւնահեղ պատերազմներով։

Այս շարժման միութիւնն է—և դրա յաղթանակը հնարաւոր կը լինի միմիայն բոլոր երկիրների պրոլետարների մերձեցմամբ—որ տալիս է բանւոր դասակարգին ոյժ ու ընդունակութիւն՝ առաջ մղելու համաշխարհային ազատութեան և խաղաղութեան գործը։

Բոլոր երկրների աշխատաւորները համոզուած են, որ իրենց ազատագրման էական պայմաններից մէկը, աշխատանքի ժամանակամիջոցի կրճատումը և 8 ժամեայ աշխատանքի հաստատումն է, սէնդիկային և քաղաքական պայքարի միջոցով։

Այս հիմնական բարեփոխութիւնը իրագործելու համար՝ նրանք իրաւունք ունին հաշի առնելու ո՛չ թէ միայն իրենց սեփական ջանքերը, այլ և կապիտալիզմի համաշխարհային տարածման յեղափոխական հետևանքները։

Հսկայական արդիւնագործութեան արագընթաց աճումը աւելի և աւելի կարևոր և հնարաւոր է դարձնում աշխատանքի ժամերի այդ սահմանափակումը՝ միախմբելով բանւորներին, լարելով նրանց աշխատանքը, միացնելով նոյնիսկ արդիւնաբերութեան պայմանները։

Հետզհետէ ընդունում են, որ 8 ժամեայ օրը անհրաժեշտ է վերանորոգելու աշխատաւորի սպառած ուժերը, դադարեցնելու սերունդի այլասերումը, միջոց տալով բանւորական մասսաներին՝ մասնակցելու մարդկութեան բարոյական և մտաւոր կեանքին։

Եւ հակառակ այն եսական դիմադրութեան, որ դեռ ևս ցոյց է տալիս կապիտալիզմը՝ շահագործողների այս մասնական ազատագրման գործում—մի հանգամանք՝ որ ինքն ըստ ինքեան նախապատրաստող պայման է նրանց կատարեալ ազատագրման համար—սոցիալիզմը շարունակում է բոլոր երկրներում կազմակերպել իր բանակները միշտ աւելի ստւար և միշտ աւելի մարտական։

Ռուսաստանում պրոլետարը հանդէս է գալիս իբրև մի վճռական գործօն և գերագոյն յոյս յեղափոխութեան համար։ Ռուսերիայում, Հունգարիայում, Գերմանիայի շատ տեղերում ընդհանուր ձայնաւորութիւնը հասել է իր յաղթանակի նախօրէքին։ Ֆրանսիայում միաձոյլ սոցիալիզմը վաստակում է նոր կորով՝ իր մարտիկների եղբայրական մերձեցման մէջ։ Միացեալ Նահանգների կազմակերպութիւնները պատրաստւում են միանալու։ Մեծ-Բրիտանիայի „Աշխատաւորների կուսակցութիւնը“ ընդգրկում է սոցիալիզմը։

Ամենուրեք կառավարող հին ուժերը թառամում են։ Ամենուրեք աշխատաւորները միանում են նրանց դէմ, որոնք տիրապետում և շահագործում են իրենց։ Ամենուրեք բանւոր դասակարգերը ըմբռնում են, որ հարկաւոր է միջազգային համերաշխութիւնից անցնել դէպի գործ, բոլոր օգտակար ծրագիրների համար, բոլոր միջոցներով, նպատակ ունենալով հաստատելու խաղաղութիւն բոլոր ազգերի մէջ և խափանելու կապիտալիստ կառավարութիւնների պատերազմատենչ դաւերը։

1906-ի մայիսի 1-ը նշանակ է մի փառաւոր տարեւայ, բեղուն իր հետևանքներով և էլ աւելի բեղուն այն յոյսերով, որ նա ներշնչում է։

Մասնակցելով պատրաստող ցոյցերին՝ աշխատաւորները կ՚ընդգծեն իրենց վճռական կամքը իրականացնելու այդ յոյսերը։

Գործադուլ արէք մայիսի 1-ին.
Ցոյց կազմակերպեցէք մայիսի 1-ին.
Յարգանք աշխատանքին։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕ

***

Սպասելիքները խաբուսիկ չէին։ Ներկայ տարեւայ մայիսի 1-ը՝ աւելի քան երբ և իցէ՝ ցնցեց կապիտալիստական աշխարհը, և այդ՝ իր վճռական պահանջներով, իր կարգաւորուած ցոյցերով, իր ցոյցերի մարտական ընդհանրութեամբ։ Կար մի ժամանակ, երբ եւրոպական գլխաւոր կենտրոններում դրամատէր դասակարգը և ամբողջ քաղաքենին՝ իրեն զգաց դէմ առ դէմ մի բանակի, որ սպառնում էր յարձակումն գործել, և որի առջև նա փախուստ տուեց։ Պարիզեան „գաղթը“ մէկն է դրա նախանշաններից։

Աշխատաւորների բանակը՝ երէկ անշան և նոյն իսկ „արհամարելի“, այսօր դարձել է հսկաւոր, սպառնական և զօրաւոր։ Իսկ վա՞ղը։ Արդարութեան և գիտութեան պահանջն է, որ նա լինի վաղւան

տէրը, իբրև ձեռնհաս և մեծ վարպետ խաղաղութեան ու ազատութեան, որին այնքա՜ն կարօտ են մեծ և փոքր բոլոր ազգերը…

Թ Ե Ր Թ Օ Ն

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂՒԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Թիւրքական բանտեր)

II

Քաղաքական բանտարկեալներ. 1882-ի ձերբակալութիւնները Էրզրումում. Բանտարկեալներ մեծ կոտորածների միջոցին. Բանտային տէրրոր. Խմբական սպանութիւններ. Թունաւորումն. Իխտիլալջիներ. Խուզարկութիւն. բռնի խոստովանք. Զինջիր. Ղազուխ.

—

Հայկական շարժման օրերից սկսած՝ Թիւրքական բանտարկեալների թւում հայ քաղաքական կալանաւորները կազմում են պատկառելի տոկոս: Դրանք տեղաւորւում են խառն, ամեն կարգի ոճրագործների, յանցաւորների ու սրիկաների հետ միասին, միևնոյն բանտերի մէջ և հետևաբար ստիպւած են ենթարկւելու նոյն անտանելի դժոխային պայմաններին, որոնց նկարագրութեան նւիրւած էր այս յօդւածի առաջին մասը *:

Թիւրքահայը, իբրև քաղաքական յանցաւոր, բանտերի մէջ երևաց 70-ական թւերի վերջերին Էրզրումում, հենց ռուս զինւորների այնտեղից դուրս գալուց անմիջապէս յետոյ, երբ մի քանի երիտասարդներ մտածեցին մի ը ն կ ե ր ու թ ի ւ ն կազմել և զինւել՝ քիւրդերի յարձակումների դէմ պաշտպանւելու համար: Թիւրքերն ատամներ էին կրճտացնում հայերի դէմ՝ այն ժպտուն և ուրախ տրամադրութեան պատճառով, որ նրանք ցոյց տւին ռուս զօրքի Էրզրում մնալու օրերին: Վրէժ առնելու առիթներ էին որոնում: Կասկածը գնալով մեծացաւ կառավարական շրջաններում, մինչև որ 1882 թւականի դէպքը, իր ցնցող ու ոգևորող շնչով՝ քաղաքական խմբական ձերբակալութիւնների պատրւակ եղաւ: Դէպքի առիթով մօտ 400 քաղաքական յանցաւորներով լցւեց Էրզրումի բանտը:

Սակայն զնդանը, որից երբեմն այնքան վախենում էր հայը, սկսեց արհամարհւել: Հենց առաջին քայլում հայ յեղափոխականը վալի-փաշային տւած պատասխանով բնորոշեց իր պատրաստակամութիւնը՝ կեանքի գնով պաշտպանելու իր կորցրած իրաւունքը, ընտանիքի պատիւը—ազատութեան նախանշանները:

„Երեք տարի շարունակ մեզ կեղեքում են Շէյխ Իբադուլլահը իր հրոսակներով, չերքէզները, մուհաջիր միւսիւլմանները, որոնց խրախուսում էք դուք, վալի փաշաներդ և ձեր ստորադիր պաշտօնեաները: Հայ չը մնաց, որ չը կեղեքւի, հայուհի չը մնաց, որ չ'անպատւի, տուն չը մնաց, որ չը թալանւի: Ամբողջ գիւղեր քարու-քանդ եղան, հարիւրաւոր անմեղ ընտանիքներ կորան և այդ բոլորը դուք գիտէք, փաշա էֆէնդի: Դուք գիտէք, որովհետև ձեր հրամաններով է, որ կատարւած են բոլոր աւերումները: Ահա հենց այդ պատճառով մենք ընկերութիւն կազմեցինք, որ կարողանանք մեր պատիւը և ինչքը պաշտպանել ու դէմ դնել այդ չարագործութիւններին“:

Հայ յեղափոխականի հաւատամքն էր այդ, որ այդչափ պարզօրէն դնւում էր պաշտօնական Թիւրքիայի առջև 400 բանտարկեալների կողմից՝ նրանց առաջնորդ ու ղեկավար Կէրէկցեանի, Վէմեան զինագործ քահանայի և Ալէքսանի բերանով: Դա ըմբոստութեան և կռւի առաջին նշանն էր, որ տրւում էր դարևոր ստրուկի կողմից դարևոր բռնապետութեան: Եւ միաժամանակ դա սկիզբն էր բանտարկութիւնների այն հսկայական շարքի, որ գնալով աւելի ու աւելի մեծ չափեր առաւ, մինչև որ հասաւ 95 թւականի հայկական մեծ ողբերգը, իր ահռելի բանտարկութիւններով:

* Տես „Դրօշակ“ ապրիլ.

Սարսափելի է այդ շրջանի հայ բանտարկեալների կեանքը: Նրանք երանի էին տալիս փողոցներում ու տների մէջ խողխողւած իրենց եղբայրներին ու քոյրերին, որ մի քանի ժամւայ չարչարանքից յետոյ՝ մեռան, „հանգստացան“. մինչդեռ իրենց չարչարանքն ու տանջանքը ոչ վերջ ունէր և ոչ վախճան: Ինկվիզիցիական հռչակաւոր տանջանքները նսեմանում են այդ վիթխարի ցաւի, Թուրք բռնապետութեան ուղեղի ծնունդ՝ այդ աներևակելի սարսափի հանդէպ:

Կոտորածի ահեղ շրջանն էր:

Գնդակներից խոյս տւող, մեծ մասամբ հարուստ և դիրքով հայերը, որոնք լցւել էին այս կամ այն քաղաքի սէրայի բակը՝ պաշտպանութիւն գտնելու համար, բոլորն էլ նետւեցին բանտերը և ապա դրանց մէջ եղած քիչ շատ ազդեցիկ ու կառավարութեանը „խային“ ճանաչւածները հենց սէրայի բակում էլ զինւորների ձեռքով հրացանի բռնւեցին: Կարելի՞ է երևակայել աւելի սարսափելի բան, քան այն, որ ահագին բազմութեան մէջ ամեն մէկը սրտատրոփ սպասում է իր հերթին, երբ երկաթէ դուռը ահագին շռինդով բացւում է և զինւորները կարմրած աչքերով՝ եաթաղանները ձեռքներին ներս են մտնում և ջոկում անպաշտպան հայերին… Քանի՜-քանի՜ ինքնասպանութեան դէպքեր, որքա՜ն խելագարւածներ բանտի սև պատերի մէջ: Այդ ոչ ոք գիտէ:

Բայց ահա համատարած կոտորածի հետ վերջացաւ և բանտային կարմիր տերրորը: Սկսւեց երկրորդ շրջանը: Հերթը եկաւ յեղափոխականներին: Ո՞վ պատճառ եղաւ այդ ջարդին ու կոտորածին,—ի խ տ ի լ ա լ ջ ի ն ե ր ը:

Առաջին գործողութիւնը խուզարկութիւնն է:

Խուզարկութեան գործին, բացի ոստիկանութիւնն ու ժանդարմիական ծառայողները, մասնակցում են ոչ միայն մուավինը, մուստանտիկը, բէլէդիէ բէիզը, Թաղի մխտարը, այլ և զինւորները, և թիւրք աղաներն ու բէյերը: Ամեն մի հ ա ւ ա տ ա ց ե ա լ թիւրք կամաւոր լրտես է և ոստիկանի պաշտօն է կատարում. լուրեր է բերում կառավարութեան, թէ այս ինչի մօտ զէնք է տեսել, թէ այն ինչը արգելւած թղթեր ունի եայլն: Եւ մի պարզ մատնութիւնն ու լուրը բաւական է, որպէսզի իսկոյն խուզարկւի „կասկածի“ ենթարկւած տունը: Զինւորները ամեն կողմից շրջապատում են՝ հրացանները պատրաստի բռնած, որ եթէ մէկն ու մէկը փորձէ փախչել, հրացանազարկ անեն: Տան մէջ կանանց և երեխաների լացն ու շիւանը աշխարհ է բռնում: փնտրում են տան տղամարդին, որ արդէն կոտորածին զոհ է գնացել, բայց այդ բանին ոչ ոք չէ ուզում հաւատալ… Տղամարդ չը գտնելով, տան տիկնոջն են հարցաքննում, նրա պատասխանից գոհ չեն, երեխաներին են քննում, ապա դրացիներին և եթէ պատահմամբ նրանց տւած ցուցմունքները հակառակում են միմեանց, իսկոյն ամբողջ տունը տակն ու վրայ են անում: Ոստիկանները ոտի տակ են տալիս ամեն ինչ, փշացնում, պիտանի իրերը գողանում, զարդերն ու դրամը յափշտակում: Եւ այդ ամբողջ ժամանակ մ ե ծ պ ա շ տ օ ն ե ա ն ե ր ը ժամանակ չունեն գանգատներ լսելու կատարւող անկարգութիւնների դէմ,—նրանք հարցաքննութեամբ են զբաղւած: Ամեն մի կտոր թուղթ, մի անմեղ գիրք, ինչ ուզում է լինի, վտանգաւոր է և կասկածի առիթ. դրանք բոլորը ծրարւում են և կնքւում: Որքան շատ գիրք տեսնեն, այնքան աւելի վտանգաւոր մարդու հետ գործ ունին: Յեղափոխականից աւելի գիրքն է թշնամի… „Եթէ տանտէրը չը կայ և մեռած է, ուրեմն իր արժանի վարձը ստացել է—մտածում են պաշտօնեաները—իսկ եթէ նա կենդանի է և խոյս է տալիս, դատարկ չը պիտի յետ դառնալ“: Նրա մեծ որդին կայ, եղբայրը կայ, բարեկամը կայ, մէկին վերցնում են նրա փոխարէն, մինչև որ ինքը ներկայանայ… Ձեռքը ընկած տղամարդին ամուր կապկապում են և զինւորների հսկողութեամբ ուղարկում դէպի կենդանի թաղւածների աշխարհը: Այդ տեսարանը անծանօթ չէ թիւրքահային… „Եասագ, եասագ“, գոռում են զինւորները. „Դին գիւշմէնի“ գոռում է ամբոխը և առաջ վազում՝ ձեռքերով բզկտելու կալանաւորին: Զինւորների խումբը պատռում է ամբոխի շարքերը և առաջնորդում կալանաւորին դէպի սէրայ…

Եւ ահա բերում են դրանք, ծեր, երիտասարդ, աղքատ ու հարուստ և դիզում իրար վրայ բանտի խոռոչներում։

Հալածանքի այդ անսովոր միջոցին բանտերի դռները փակ էին և երբեք չէին բացւում։ Աղբը, կեղտն ու մարդիկ իրար էին խառնված։ Ոչ ոք բողոքել չէր համարձակւում, ձայն հանողը գանակոծւում էր մինչև մահւան դուռը. մարդիկ դժուարութեամբ էին շնչում ապականած օդը և քաղցից կիսամեռ իրար վրայ թափւում։ Իսկ դրա անմիջական հետևանք՝ հիւանդութիւնը կատարում էր իր կատաղի հունձը։ Տիֆը ահռելի չափեր առաւ։ Մեռնողները մնում էին կենդանիների հետ խառն, մոռացւած, այլանդակւած։ Ձևի համար երբեմն գալիս էր կառավարական բժիշկը և և դռան ծակից դիտում ներսը, և առանց ներս մտնելու՝ հիւանդներին դեղ դրում։ Դեղ ընդունողները ի զարմանս ամենքի 24 ժամւայ ընթացքում մեռնում էին։ Դա անհասկանալի սիր էր... դիտաւորեալ թունաւորումն... Այդ ձևի մեռնողները լինում էին նրանք, որոնք ուժեղ էին և կարող՝ դիմադրել այդ անտանելի կեանքին։ Գաղտնիքը հասկացւեց, բայց ոչ ոք չէր համարձակւում ձայն հանել։ Սարսափը տիրել էր ամենքին. նոր հիւանդները վերցնում էին բժշկի նշանակած դեղը և գաղտնի ուշնջացնում։ Բժիշկը նորից այցելում էր և զարմացած տեսնում, որ երեկւայ հիւանդը դեռ կենդանի է։

—Դեղը ընդունեցի՞ր, դեռւոր։

—Այո՛, էֆէնդիմ, պատասխանում էր հիւանդը դողդողալով.

—Բայց... կմկմում էր բժիշկը և այլայլւած այդ անաջողութիւնից՝ շարժում իր գլուխը ու հազարապետի ականջին շշնջում խորհրդաւոր կերպով...

Հիւանդութիւնից ու բժշկի տւած թոյնից մեռնում էին ահագին թւով հայեր։ Ամբողջ Թիւրքիայում կոտորածների միջոցին ձերբակալւած հայերի թիւը հասնում էր մօտ 25000-ի։ Մի ամիս վերջը միայն դրա կէսն էր մնում կենդանի, այն էլ կիսամեռ վիճակի մէջ...։ Եւ երբ արդէն „հունձը՝ կատարւած էր, կառավարութիւնը յարմար դատեց վերջ տալ բանտային սարսափի երկրորդ փուլին—սպիտակ տերրօրին։ Բանտերի դռներն սկսեցին բացւել. սարսափը անցաւ։ Բայց հայերը վախում էին դուրս գալ բակը. այնտեղ վիտում էին թիւրք սճրագործները և ատամներ կրճտացնում „խային գեաւուրների“ համար։

Հայերը թւով թիւրքերից շատ էին, ճիշտ է, բայց սարսափը այնքան մեծ էր, որ ստացած զրկանքին պատասխանելու միտքն անգամ յանդուգն էր համարւում։ Հայ կալանաւորները շատ աւելի գոհ կը լինէին, եթէ իրենց սենեակների դռները գոց մնային։ Բայց դրա հակառակ, թիւրքերը իրենք էին ուժով ներս խուժում հայերի սենեակը և չարչարելով՝ դրամի, կերակուրի և հագուստի համար ու մի խոտտումներ առնում։ Զուսնեւոր, աղքատ հայ կալանաւորը, որ ոչինչ չէր կարող տալ, ամենուրեայ ծեծի ու տանջանքի էր ենթարկւում թիւրք բանտարկեալների կողմից։ Բողոքները անլսելի էին մնում։ Եւ ում բողոքէին, երբ պաշտօնեաներն էին յաճախ կազմակերպում այդ սճիրները։

Այդ բաւական չէ, ունեւոր հային որևէ սրիկայ թիւրք իր հովանաւորութեան տակ է առնում և իր սենեակը տանում։ Դա նրա կթան կովն է. ամեն ինչ նրանից է ստանում։ Ցարիներով տաք կերակուրի երես չը տեսնողը „փիլաւ“ ու „գոլմա“ է ուտում. և խեղճ կալանաւորը բերել է տալիս ամեն ինչ հազար ու մի զրկանքներով, որպէսզի կարողանայ պաշտպանւել միւս սրիկաների ապառնական հալածանքներից. և զօրաւոր հովանաւորի „խաթեր“ համար միւսները հային գ ե ա ւ ո ւ ր չեն կանչում, այլ չ ո ր պ ա ջ ի։ Եւ „չորպաջին“ հովանաւորողի միջնորդութեամբ կարող է տեսնել ընտանիքի կողմից եկած այցելուին, նրա միջնորդութեամբ կարող է իր առևտրական կիսատ պռատ հաշիւները կարգադրել, իհարկէ որոշ տոկոս նրան բախշիշ“ տալով։ Իսկ „հովանաւորը“ թէ բանտում և թէ՛ բանտից դուրս գալուց յետոյ՝ ամեն տեղ հայերի մտ պարծենում է իր հայասիրութեամբ և շահագործում այդ հանգամանքը ուզած չափով...

Անցնենք քննութեան։

Անհասկանալի է ազգած երկիւղը։ Ահա, օրինակ, Մալթիայի բանտը։ Մուխ խուցերում առանձնացրել են քաղաքի աչքի ընկնող հայերից 5 հոգի ջոկ-ջոկ։ Նրանց վրայ հագուստ չը կայ, մի շապիկ և մի վարտիկ միայն։ Սգաւոր քաղաքը խոր քնի մէջ է. բանտում իսկ ուր աղմուկն ու աղաղակը անպակաս է, այդ ժամին կատարեալ լռութիւն է տիրում։ Մօտիկ խուցերից երբեմն լսւում են խուլ հառաչանքի ձայներ, ծանր անքոյ ու խռխռոց։ Կալանաւորներից երկուսը ծեծի ու ջարդի տակ ուժասպառ դարձած՝ այլևս տաքի վրայ կանգնելու անկարող՝ ընկել են թաց ու ցեխոտ յատակի վրայ։ Վարտիկն ու շապիկը թրջված և սառած կպել են նրանց մարմնին՝ ջարդւած, արիւնով սևացած տեղերի ցաւը կրկնապատկելու համար. նրանք զառանցում են. դժւար է հասկանալ, թէ ինչ են խօսում։ Միւս երեքը այս ձայներից սարսափած, իրենց հերթին են սպասում դողալով. ցուրտ մինչև ոսկորներն է թափանցել, ատամները միմեանց են զարկւում ու սառստուտ տարածում խուց։ Մութ խոռոչներում։

Բացւում է խուցերից մէկի դուռը։

—„Դօկտեօր գէլսէն, ձայն է տալիս գինւորը։

—Բժիշկ Ա... կրաղլուխ դուրս է գալիս և ընկնում գինւորի առաջ։ Բանտի բակից դուրս են հանում նրան և տանում փօլիսխանան, ուր նստած են մուտֆինը, հազարապետը և կօմիսերը։ Երեք սահիկան և մի քանի ժանդարմներ տաքի վրայ սպասում են։

—Արի, խայ՛ն, տեսնենք ինչպէ՞ս կազմակերպեցիր գինւած խումբը և ուղարկեցիր Զէյթուն՝ օգնութեան, ասում է կւմիսերը։

—Ստաֆուրուլլահ (քաջ լիցի) էֆէնդիմ, ես այդպիսի գործեր կատարող չեմ, ես վեհափառ սուլթանի սարսէն եմ։

—Է՛, խնդիր, դեռ սուլթանի անունն էլ ես առնում պղտւած բերանդ. պապանձի՛ր ու ճիշտ պատասխան տուր։ Ասա, տաքի ելաւ և մի ուժեղ ապտակ իջեցրեց բժշկի երեսին։

Նրա աչքերի մէջ երևացին ոսկեղենքի կայծիլներ։

—Ինչ՞ու ես զարկ... Դեռ խօսքը չը լրացած՝ ապտակը կրկնւեց։

—Դեռ համարձակւում է պատասխան տալ այս խնդիրը, պառաց կւմիսերը և ուզեց կրկին զարկել։

Մուավինը դարձաւ հազարապետին և կամացուկ նկատեց, որ իր ներկայութեան զարկել չը տայ։ Կւմիսերը հասկացաւ այդ և յետ քաշւեց՝ կրկին առաջին հարցը առաջարկելով։

—Էֆէնդիս, այդ հարցին պատասխանեցի, կրկնեց կալանաւորը,

Տիրեց լռութիւն։ Մուավինը զգաց, որ իր ներկայութիւնը խանգարում է քննութեան դործը։ Վերկացաւ և բինբաշու ականջին փսփսալով՝—„Ձեզ տեսնեմ, առանց խօսք քաշելու՝ իր տեղը չը զրկէք“,—դուրս գնաց և կողքի սենեակը մտաւ։

—Ձի՞ն ուզում խոստովանել, հա՛, դառաց կւմիսերը. հիմայ քեզ ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում այդքան յանդուգն խօսել—զափթիէներ, որոն դեռին զարկէք։ Զափթիէները մի ակնթարթում վայր գլորեցին բժշկին և քացիների տակ առան։ Սկսւեց սովորական դարձած տանջանքը։ Բժիշկը, որչափ այ՛ ուներ, զսպում էր իրան. նա ամաչում էր ձայն հանել... Ահա տաքի կանգնեց ինքը կւմիսերը, իր ձեռքով ջինիվիզը՝ անցկացրեց խեղճի երկու բթամատերին և սկսեց պտուտակը դարձնել։ Ցաւի մի ծանր հառաչ դուրս թռաւ բժշկի բերանից, բայց նա իրեն նորից զսպեց. ատամները իրար կցեց, որ չլինի թէ գոռայ։ Կւմիսերը որքան այժ ուներ դարձրեց պտուտակը։ Բթամատների ոսկորները սկսեցին ճթճթալ, արիւնը սկսեց դուրս ցայտել... Բայց բժիշկը շարունակեց զսպել իրեն... Կւմիսերը կատաղեց և հրամայեց զափթիէներին կատարել վերջին պատուէրը։ Զորան էլ միանգամայն յարձակւեցան և սկսեցին ղմել կալանաւորի ամրձիքը... Սա արդէն անկարելի էր տանել։ Բժիշկը արձակեց մի այնպիսի ակամայ գոռաց, որ աւելի եղան բառաչի էր նման, քան մարդու կոչի։ Ցանջանքի ողբն էր այդ... Բոլոր ինկվիզիտորները այդ ձայնից ետ քաշւեցին. սէրայի բակում քնած պահապաններն ու պաշտօ-

նեաները վազեցին, իմանալու թէ ում են տանջում։ Միւս սենեակից դուրս եկաւ մուավինը և իբրև դժգոհ՝

—Այս ի՞նչ է, ի՞նչու է գոռում այս մարդը։

—Գեաւուրները լաւ միջոց ունին արդարանալու, դիտմամբ առաջուց են գոռում-գոչում, որ պատժից ազատուեն, վրայ բերեց կօմիսէրը։

Այդ ոչինչ, անիծուածը խոստովանեց, որ ինքն է արել, աւելացրեց բինբաշին։

—Չէ, ես չեմ արել, կիսաշունչ արտասանեց բժիշկը՝ խրախուսուած մուավինի ներկայութիւնից,

—Շատ մի խօսիր, վրայ բերեց մուավինը, ես ականջովս լսեցի... Տարէք սրան, հրամայեց նա։

Չորս զափթիէներ դուրս հանեցին դժբախտին փօլիսխանայի դռնից, ոտքերից բռնած քարերի ու ցեխերի միջով քաշ տուին տարան, նախկին խցիկի դռնից ներս գլորեցին։ Դուռը գոցուեց...

Մի ուրիշ պատկեր։

Դէպքը պատահում է Մարաշում։ Բոլոր հայ բանտարկեալներին տանջել, չարչարել, խոստովանեցրել են և լցրել զափթիէների ախոռներում, ձիերի աղբի մէջ։ Հերթը հասաւ Արթին Ղույումջեան փաստաբանին. Նա տալիս է „օրէնքի" թելադրած պատասխանները։ Նրանից չեն կարողանում խօսք դուրս քաշել։ Սպառնալիք, ծեծ, որ կատարուած է յատուկ տանջող մահակով, օրերով սոված թողնել, անքուն պահել—բոլորը փորձուած է։ Ցաւից ու յոգնածութիւնից խեղճն այլևս շարժուել չէ կարողանում։ Վերջին անգամ նրան կանչում են և նորից պահանջում՝ յայտնել, թէ „ինչ ծրագիր էին կազմել հայերը, եթէ զէյթունցիները Մարաշ թափուելու լինէին"։ Նա անյողդողդ է... Ահա զայրացած հազարապետը մռնչաց և հրամայեց վերջին միջոցին դիմել։ Ինքը դուրս եկաւ։ Զափթիէները ներս բերեցին պատրաստած „ղազուխը" և բոլոր ուժով ներս անցկացրին դէպի հաստ աղիքը։ Կալանաւորը գալարւում է ինչպէս վիրաւոր օձ՝ շաղախուած իր սեփական արեան մէջ։ Եւ տանջող անմեղի դիմաց՝ պաշտօնեաները մեծ զւարճութիւն են զգում. նրանք հռհռում են և հրճւում՝ Մահմեդի հնարած „սրամիտ" տանջանքը դիտելով,

Փադիշահին ծառայելու տենչանքով բռնուած՝ ի՛նչ տանջանքներ ասէք չեն տուել հայ քաղաքական բանտարկեալներին թիւրք պաշտօնեաները։ Նրանց հրամանով քանի՛-քանի բանտերում բռնաբարել են հասակաւոր տղամարդկանց՝ նրանցից խօսք քաշելու նպատակով։ Եւ քանի՛-քանի անգամ հայ բանտարկեալը, իր պատիւը փրկելու համար, ստիպուած է եղել սուտ խօսել, չեղած իրողութիւններ պատմել, գործի մէջ չունեցած իր մասնակցութիւնը յայտնել, համակերպել ոստիկանութեան նենգ, չարամիտ ծրագիրներին և ստորագրել նախօրօք պատրաստած կեղծ ցուցմունքներին...

Եւ դա անւանւում է քննութիւն...

Օրէնքով քաղաքական բանտարկեալները շատ աւելի ազատութիւններ ու դիւրութիւններ պիտի ունենան, քան սովորական բանտարկեալները, որովհետև նրանց պատիժը որքան և ծանր լինի, թէկուզ 101 տարւայ դատապարտւած, բոլորն էլ բերդարգել են համարւում, մինչդեռ քրէական յանցաւորները՝ թիապարտ։ Բերդարգելները պէտք է տարբեր, աւելի մաքուր տեղ ունենան, քան թիապարտները, և բացի սովորական թ ա յ ի ն ի ց, պիտի ստանան նաև օրական 4 ղուրուշ դրամ. բերդերում նրանք ազատ պիտի լինին բանտային կեանքից և պիտի ապրեն պարսպապատ քաղաքի մէջ, իբրև աքսորականներ, և պարապեն ուզած գործով։ Բայց այդ „օրէնքը" ոչ մի տեղ գործ չի դրւում. Նրանք ոչ դրամ են ստանում և ոչ էլ բերդերում ազատ են բանտային կեանքից։ Մինչդեռ ընդհակառակը շատ թիապարտ ոճրագործներ այդ իրաւունքն են վայելում, միանգամայն հակառակ օրէնքի տրամադրութեան։

Թիւրքական բանտերում եթէ հսկողութիւն կայ, այդ միայն քաղաքական բանտարկեալների համար է և այն՝ յատկապէս հայերի։ Մինչդեռ որևէ ոճրագործի մօտ եկող այցելուին, համարեա առանց բացառութեան, ներս են ընդունում, մի բան, որ „օրէնքով" արգելւած է, քաղաքական բանտարկեալների այցելուին ոչ միայն ներս չեն թողնում, այլ և սովորական յանցաւոր հայերի այցելուներին արգելում են ներս մտնել, „որպէսզի նրանք լուրեր չը տանեն-բերեն քաղաքական բանտարկեալների մասին"։ Նրանց արգելւում է նոյնիսկ վանդակապատին մօտենալ առանց հսկողութեան։ Այցելուն՝ հեռու կանգնած պիտի բարձր խօսի և այն էլ թիւրքերէն. մի ոստիկան էլ, հայերէն հասկացող, որ կամ լրտես և կամ մահմեդականացած հայ է, նստում է մօտը, որ հայերէն մի կասկածելի բառ լսելու դէպքում իմաց տայ ոստիկանութեան։ Յաճախ է պատահել, որ անմեղ այցելուին ներս են նետել և ամիսներով բանտում պահել։ Չը նայելով այդ անսովոր խստութիւններին՝ հայերը այնուամենայնիւ լուր, նամակ ստանալու կամ ղրկելու գործում առանձին նեղութիւն չեն կրում։ Ոստիկանները և պահապանները ամենափոքրիկ կաշառքով, մի դահեկանով իսկ, պատրաստ են ծառայութիւններ մատուցանել, ի հարկէ գաղտնի։

Եթէ բանտը պ ա տ ժ ի միջոց է, այդ միայն քաղաքական յանցաւորների համար է։ Բանտային զւարճութիւնների մէջ, որ մենք արդէն նկարագրեցինք, նրանք բոլորովին մասնակցութիւն չունեն։ Այդ „զւարճութիւնը" միւս կողմից, շատ է սուր, որ կարողանայ հրապուրել քիչ շատ մաքուր ու բարոյական հակումներ ունեցող մարդկանց։ Բարքի անկումը, կեղծիքը, ինտրիգը զզւելի է դարձնում այն հիմնարկութիւնը, որ ուղղիչ միջոցի անուան տակ ներկայանում է մի անբարոյականոց և լոյս աշխարհից, սիրելիներից ու հայրենիքից տարագիր վիճակը չէ, որ ծանր է գալիս հալածական կալանաւորին, որքան այն միտքը, թէ ինքը ստիպւած է ունենալ և կրել այդ գազիր վիճակը և... լռել։

ՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ
(Շրջաբերական)

Ը ն կ ե ր ն ե ր.

Թաւրիզում մի քանի օր առաջ պատահած՝ խորին նողկանք ազդող՝ իրողութիւնը, կատարւած յեղափոխական դիմակի ներքոյ թագնւած բաշիբօզուկների ինչ որ խմբակի կողմից, գալիս է մի անգամ էլ (օրինակ, մեր շրջանում, մասնաւորապէս Սալմաստում, վերջերս կատարւած մի շարք ցաւալի ընդհարումների և նոյն իսկ սպանութեան դէպքեր) ապացուցանելու բարոյական և յեղափոխական սնանկութիւնը ենիչերիների այն խմբակցութեան, որի միակ զբաղումն ու գործը եղել է միշտ եղբայրասպան կռիւների յարուցանելն ու արծարծելը։

Կենտրոնական Կօմիտէն սրանով յայտարարում է ի գիտութիւն դաշնակցական ընկերների, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ երբէք տրամադիր չէ վատ դասեր առնելու ուրիշներից, միշտ անխնայ է եղել դէպի յեղափոխական դրօշակը անարգող անհատները և առանց վարանումի դուրս է շպրտել այդպիսիներին իր շարքերից։ Դա մի հրամայական պահանջ է ամեն մի կազմակերպութեան համար, որ չի կամենում դէպի սնանկութիւն, դէպի ինքնասպանութիւն դիմել։

Դաշնակցական ընկերները ընդհանրապէս և զինւորները մասնաւորապէս պէտք է ամեն կերպ խոյս տան արիւնհեղութիւնից, անգամ ամենասուր պրովօկացիաների հանդէպ, այլ և յեղափոխութեան հիմքը և հասարակութեան անդորրութիւնը վտանգող ամեն տեսակ արարքներից։ Վստահ պիտի լինել միաժամանակ, որ կազմակերպութիւնը գիտէ՝ հարկաւոր դէպքերում՝ պատշաճաւոր և իր կանոնաւոր ճանապարհով պատժել այդ օրինակ ժպիրհ գործերի իսկական հեղինակներին, որոնք գալիս են զարթուցանելու նորա իրաւացի զայրոյթը և, քանի-քանի անգամներ լինելով, փորձելու նրա երկար համբերութիւնը։

18 մարտ, 1906 Հ. Յ. Դ.

ՎՐԷԺՍՏԱՆԻ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Ռուսաստան.—„ԴՐԱՄ" Կոմիտէն 4000 ֆր.

Գերմանիա.—Բեռլինի հայ ուսանող. երեկոյթի հասոյթից սահաշի Կովկասի ինքնապաշտպանութեան համար՝ (1000 մարկ) 1227 ֆր.:

Գումար 5227 ֆրանկ.

Ոսկանապատի Կ. Կոմիտէն՝

ԿԱՐՄԻՐ-ՋՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ (1905 յունուար—մայիս) ամսավճ. Դնունու միջոցաւ 62 ռուբ. 50 կոպ. Տօնածառից 20, Պ. Ուսից 100, Յոյս 8, Երեք անձերից նուէր 9, Ռազմիկ 9, Նուէր հայ զինուորներից 6. 10, Նուէր Մելիք Նիկողոսեանից 25, №№-ից 12. 50, Աւետիքից եւ հանգ. խնճոյքներում 128. 55, Երեկոյթից 78, հետեւեալ խմբերից՝ Արուսեակ 12. 50, Արամ 17, Հրայր 30. 40, Սերմացան 67. 02, Կայծակ 52. 50, Կիրճ 15. 40, Ջաբրայել 5. 60, Անի 2. 60, Ռամիլ 4. 30. Արծիւ Վասպուրականի 47. 28, Անդրանիկ 24. 60, Աղնիւ 30, Փոքրիկ 5. 70, Եռանդ 6. 40, Արուսեակ 32, Կայծակ 15. 40: Գում. 827 ռ. 35 կ.

ԱՔՍՈՐԱՎԱՅՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ (1904 յուլիս—1905 մայիս) հետեւեալ խմբերից՝ № 1 22 ռուբ. № 2 19. 40, Բողբոջ 7. 50, Ճիճ 16, Վրէժ 39, Բիրժա 15. 50, № 3 3. 30, № 4 6. 50, № 5 3. 80, № 7 7, № 8 2. 50. Մի երեկոյթից 80, Վաճառուած պատկերներից 21. 60, Արազ գիրքից 13. 20, Նուէրներ՝ Մի պարոնից 10, X 5, պ. Յակոբեանից 7. 50, Մի հայ տիկնոջ նուիրած իրերի մի մասի վաճ. 848. 50, Նուէրներ Սխնիկից 100, Սպանդարաքից 100, Գրիգորեանից 100, Յակոբեանից 75, Մկրտիչեանից 50, Յարութիւնեանից 50, Սեփանեանից 100, Սաքունցեանից 100, Տ. Հռէփսիմէից 100, Գրիգորից 10:

Գումար 1913 ռուբ. 30 կոպ.

ԾԱՂԿԱՁՈՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ (1905 յունիս—հոկտեմբեր) հետեւ. խմբերից՝ Թնդանօթ 14 ռուբ. Անուշ 3. 30, Կուկունեանց 7, Եռանդ 3. 50, Արագած գիւղի Սուրբ խ. 6, Սուրհանդակ խ. 5. 85, Եփրատ գիւղի Սոսենց 2, Քարաղբիւր գիւղի խմբերից՝ Արշալոյս 1. 70, Անդրանիկ 1. 30, Արծիւ 2. 10, Վարդ գիւղի Խաչ խ. 1. 60, Արձագանք խ. 24, Փրփուր խ. 2. 10, Անուշ խ. 2. 80, Սերոբ Փաշա 2. 80, Կեսօն գիւղի խմբերից՝ Ազազիլ 6. 20, Վրէժառու 6, Աշխատաւոր 8. 60, Կուկունեանց 5, Թնդանօթ 11, Սասուն 5, Զէյթուն 3. 05, Լոյս 12, Սուրբ-Խաչ 13. 30, Այգի 4. 80. Նուէր Աբրահամից 5, հետեւեալ խմբերից՝ Ս. Յակոբ գիւղի Անանեա 7. 50, Քարաղբիւր գիւղի Ալագեազ 1. 40, Անդրանիկ 5. 70, Խանասոր 5, Վրէժխնդիր 3. 40, Եռանդ 10, Արշալոյս 12. 20, Թնդանօթ 11, Ս Յակոբ գիւղի Անդրանիկ 17. 50, Քարաղբիւր գիւղի Արարատ, Սարոսի 3. 60, Արծիւ Ա. 1. 80, Արծիւ Բ. 2. 70, Վռամշապուհ գիւղի Կտրիչ 13. 10, Շանթ 15. 75, Կայծակ 12. 30, Վրէժ 11. 55, Սուրբ գիւղի Զօրաւոր 2. 40, Կայծակ 3. 50, Ազրայիլ 4. 90, Հրաբուխ 1. 80, Հրեղէն 2. 40, Կախաւան գիւղի Հետեւակ 1. 80, Որոտ 1. 95, Խրատ 2. 45, Ալիք 0. 90, Կամար 1. 30, Կրակ 2. 70, Երկաթ 3. 55, Լոյս 3. 75, Ամպ 3. 30, Երկունք 3. 05, Բոլոր 63. 35, հետեւեալ խմբերից՝ Թնդանօթ 11, Կուկունեանց 10, Ճառագայթ 6, Եռանդ 5. 28, Արշալոյս 11. 10, Սերոբ-Փաշա 3. 05, Լոյս 5. 50, Սասուն 7. 55, Զէյթուն 3. 15, Թուման 1. 80, Սերոբ-Փաշա 2, Արշալոյս 4. 80, Թնդանօթ 10. 50, Քարաղբիւր գիւղի խմբեր. Արարատ 0. 80, Արծիւ Ա. 3. 20, Արշալոյս 3. 60, Արծիւ Բ. 2, Ս. Կարապետ 1. 40, Ալագեազ 1. 15, հետեւեալ խմբերից՝ Անուշ 6, Կուկունեանց 5, Լոյս 8. 40, Զօրաւոր գիւղի Ս. Խաչ 3, Եռանդ 7. 25, Վարդ 1. 90, Փերանդ գիւղից 3, Քարաձոր 1. 30, Արագած 11. 87.

Գումար 540 ռուբ. 20 կոպ.

Ընդհանուր գումար 3280 ռուբ. 85 կոպ.

Ատրպատականի Կեդ. Կոմիտէն՝

ՎՐԷԺԻ Կ. ԿՈՄԻՏԷՆ՝ (ստացել է „Մինարէթում" յուլիս 1-ից մինչեւ դեկտեմ. 31-ը 1905 թ.) հետեւեալ խմբերից՝ Քրիստափոր Ա. 87 դր. Կայծակ 67, Զէյթունիկ 87, Որոտան 83, Արշալոյս 106, Խարիսխ 63. 50, Ուխտաւոր 18, Հայրենիք 50, ԾԱՌԱՍՏԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Կանխիկ 200, Բուֆէից 10. հետեւեալ խմբերից՝ Տարածող 386, Բարդուղիմէոս 114 20, Գողթեան 220 50, Դէրիկ 223, Ուսկոկ 40, Աւետիսեան 126, Տէրոյեան 20, Մարտիրոս 32, ՃԱՌԱԳԱՅԹ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ հետեւ. խմբերից՝ Քրիստափոր կանանց 66, Զօլա 252, Քրիստափոր Բ. տղամարդ. 180, Կարօ 107. 85, Ասպարէզ 67. 50, ՔԱՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից՝ Արաւուլ 59. 75, Անդրանիկ 101. 50, Մուշեղ 87. 50, Լեւոն 185, Փայլակ 71. 25, Ծերունի 92. 50, ՄԻՆԱՐԷԹԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից՝ Զարեւանդ 141, Աղբակ 52, Ցոլակ 42, Վառ 48, Դուման 18, Քարտաշ 32, Նուէրներ ստացած Ս. Մ. Բ. 500, Մահ. Դ 400, Ս. Ռ. 30, Յանգուցեալ հայդուկ Յակոբից 350, Թափտմից 45: Գումար 4862 դր. 05 կոպ.

ՄԻՆԱՐԷԹ հանգանակ № 53 թերթով 1905 թ. ճանապարհորդից 500 դր. Շահից 250, Դ. Հ. Ջ. 250, Յ. Հ. 150, Եռանդ 70, Տրդատ 70, Սլաք 100, Ասդ 10, Կ Պէ 25, Կայծակ 20, Կայծեր 15, Արեգակ 2, Գէորգ 2, Դարուն 100, Ա. 10, Ոմն 10, Արամայիս 50, Սուրէն 10, Շահպազ 10, Ամիջան 10, Լեւոն 10, Բ. Հ. 5, Յակոբ 5, Հարութ 6, Օհանէս 4, Միր-ազիզ 10, Հայկ 5, Հմայեակ 5, Արշակ 5, Ալէքսան 4, Խոսրով 2, Աւետիք 2, Բաքոյ 20, Յարութիւն 10, Ոսկան 15, Ֆրանգիւլ 10, Սահակ 5, Միսակ 5, Գրիգոր 2, Աւետիք 4, Կարապետ 5, Աւետիք 2, Գրիգոր 3, Կարապետ 3, Պարոյր Թումանեանց 20, Գ. Հ. 8, Շահ-դուլի 10, Փայլակ 7: Գումար 1856 դրամ:

ՎՐԷԺԻ Կ. ԿՈՄԻՏԷՆ՝ („Փարոս" Կոմիտէի հանգ. Աղաւնաբերդում № 52 թերթ. 1905 թ. Բէգ 700, Յ. Ամբանդիլեան 350, Կայծակ 50, *Charles* 50, *Alexandre* 30, Ոմն 10, Ամի-Դուլ-Վզաէ 20, Ասորունուց 14, Գ. Վարդանեանց 100, Մէլիքեան 20, Ն. Մ. 100, Եղ. Հ. 200, Եղ. Ա. 150, Եղ. Շ. 200, Տ. Շ. 100, Յ. Պ. 20, Ջ. Յ. 350, Ա. Ս. 20, Ա. Զ. 30, Եղ. Բ. 170, Պանդուխտ 10, Յ. 10, Ծառայ Քրիստոսի 100, Ս. Ս. 50, Ջ. Դ. 70, Կ. Մ. Մ. 30, Քէշիշ օղլի 10, Յ. Յ. 20, Մ. Ա. 20, Զարալ 10, Դոնակ 40, Ջ. Վ. 10, Կ. Մ. Յ. 20, Կօնի 30, Ա. Շ. 10, Հ. Շ. 55, Ոմն 30, Ս-եանց 60, Մ. Յ. 20, Ս. Յ. 80, Տ. Ե. 50, Յ. Մ. 20, Որսորդ 100, Ա. Ամդանդիլեան 40, Կ. Ղ. 20, Դալուշ 10, Օր. Ս. Բ. 50, Շանթ 80: Գումար 3709 դր.

ՍԱՔԶԱՀԱՆ՝ Տուգանք 200 դր. Արշ խ. 368, Գործակատար խ. 80, Մի դասից 4, Նուէրներ Պ. Բ. 14, Մ. Բ. 10, Պ. Յ. 12, Պ. Ն. 18. Յ. Բ. 14, Յ. Խ. 6, Ա. Թ. 4, Ա. Խ. 10: Գումար 720 դր.

Ք. ԳԱԶԻ ՍԻՓԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Բէնդեր խ 235 դր. Դարի, բալղի խ. 150, Ջամալից նուէր 10, մի երեկոյթից 345, Ն. Սիւնեցի 26, մի հիւրասիրութիւնից 14, Սօղոսից 50, Պանդուխտ 30, Լեռնական 25, Ծիծեռնակ 133. 15, Ոմն 68, Կռունկ 282. 15, Անանուն 216, Գողթնեցի 52, Հինգ Ծաղիկ 147. 25, Սիւնեցի եւ Սարաֆ 25. 40, Բազէ 2, Թուման 83. 55: Գումար 1894 դր. 50 կոպ.

ՇԱՀ-ՍՈՎԱՆԻՑ № 36 հանգ. թերթ Օրէ 20 դր, Գ. Մ. 40, Ոմն 40, Համաս 50, Յ. 30, Ասդ 62, (10 ռուբ.), Ոմն 40, Արամ 20, Սերոբ 20, Պ. Սահմանեան 10, Քանդիար 10, մի ոմն 10, Դաւօ 10:

Գումար 362 դրամ:

ԳԵՏԱՓԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Արշալոյս խ. 97 դր. Նուէրներ 42, մի նակախաղ-թուղթէտից 312. 70, Դրակոն խ. 78, Եւս 60, Նուէրներ 134, Երեկոյթից 287. 45, Ասդ խ Նուէրներից 100, Դ. քամնեզին 727, Ներկայացումից 332. 80, վիճակախաղից 79. 35, Դաշտային հանդէսից 151. 10, Անդամավճար 198, Դրօշակին նուէրներ 108, Անահիտ խմբից նուէրներ 50, վիճակախաղ 94, Կարունձեից 104. 10, Հայկազուն խ. Կարունձեից 79: Գումար 3064 դր. 50 կոպ.

ԲԱՐՖՐՈՒ Ազատ եւ Եռանդ խ. 705 դր.

ՓՈԹՈՐԻԿ Նաւահանգստի Քրիստափոր խ. 238 դր.

ԱՐԱԽԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից՝ Հրայր 436 դր. Շամէ 105, Արձագանք 184, Խանան 143, Ամգան 345, Երեկոյթից՝ 92. 25, Տուգանք 105, Նուէրներ 35: Գումար 1445 դրամ 25 կոպ.

ՎՐԷԺԻ ԿՈՄԻՏԷՆ՝ Յոյս խ. 358 դր. ապառիկներից 192, Վիճակախաղի նիւթեր նուէր խ. անդամ 300, Վիճակախաղից 310, Քէօմ 104, Մուրատ խ. 633, Ներկայացումից եւ վիճակախաղից 935, Ախպէր խ. 950, ապառիկ. 122. 10, Կայծակ խ. 305, ապառիկ. 80, Արիս խ. 293, ապառիկ. 87, Սերոբ Փաշա խ. 92, Դասախօսութիւնից հասոյթ 23. 60, Նուէր X-ից 1, Ծիածան խ. անդ. եւ երեկոյթ. 924. 60, Աւետիսեան խ. 161, Անդրանիկ խ. 95. 85, Գէորգ-Չաւուշ խ. 79, Վահան խ. 40, Վազգէն խ. 79, Բաբկէն-Սիւնի խ. 24, Մասիսցաններից՝ 47. 90, Նուէրներ Նորաքոյսից 20, X-ից 20, Աշակերտական միութիւնից 30, Մի ներկայացումից կանխիկ մուտք 1000: Գումար 7309 դրամ 5 կոպ.

ԳԱՂԹԱՇԷՆԻՑ՝ Անուշ խ. 28 դր. Պատանիկաց խ. 40, Կայծակ խ. 40, Զանգի ձայր 60: Գումար 168 դր.

ԱԾԽԱՀԱՆԻ ՇՐՋԱՆ՝ Մարի խ. 40 դր. Մի քանի խմբ. 81. 90: Գումար 121 դր. 90 կոպ.

ՓԺԲՈՍ ԿՈՄԻՏԷԻՑ՝ (նոյեմբ. 1905—փետ. 20—1906) Աղաւնաբերդի ենթակոմիտէից՝ Կեանք խ. 257 դր. Սեպուհ խ. 160, Հրաբուխ 96, Կայծակ 94, Ծով խ. 220, Երկաթ 64, Անդրանիկ խ. 46, Գետափի ենթակոմիտէն՝ Զաւրոշ խ. 20. 70, Ազրայիլ 21, Արարատ 19. 50, Արամազդ 18, Թուման 21, Սամսոն 15. 20, Այգեստանի ենթակոմիտէն՝ Դալի-Բաբա խ. 24, Անդրանիկ խ. 26, Հրայր խ. 10, Քրիստափոր 19, Վահան 20, Բաբկէն-Սիւնի, 8, Կոմիտէի ներկայացումից 720. Վիճակախաղից 770, Բրօշիւրներից եւ նկարներից 182. Գում. 2831 դ. 40 կ.

Ընդհանուր գումար 29286 դրամ 65 կոպ.